Azg Ազգ

24 ՄԱՅԻՍ 2007 ՀԻՆԳՇԱԲԹԻ 97 (3749)

90-ամյա Քըրֆ Քըրֆորյանի մասշտաբային «խաղը» բարձրացնում է արժեթղթերի գները

Քըրֆ Քըրֆորյանը ցանկանում է «Էմ Ջի Էմ միրաժ» ընկերությունից գնել Լաս Վեգասի հայտնի «Բելաջիո» խաղատունը՝ իր հյուրանոցային համալիրով, եւ դեռ կառուցվող «Սիթի սենթր» համալիրը: «Ազատության» տեղեկացմամբ, երկու գործարքները կարժենան 11-12 միլիարդ դոլար: Այդ լուրը իսկույն աշխուժություն է առաջացրել շուկայում. «Էմ Ջի Էմ միրաժ»-ի բաժնետոմսերի գինը բարձրացել է 16 տոկոսով: «Սիթի սենթր»-ի կառուցումը նախատեսվում է ավարտել 2010 թվականին: 26 հեկտարից ավելի տարածքի վրա կառուցվում է հյուրանոց՝ 1650 բարձրակարգ եւ 4000 սովորական համարներով, 51 հազար քառակուսի մետրի վրա լինելու են առեւտրի, զվարճանքի օբյեկտներ, ռեստորաններ: «Բելաջիո» խաղատուն-հյուրանոցը «Էմ Ջի Էմ միրաժ»-ին է պատկանում 2000 թվականից: Միայն խաղատունը 10 հազար քառակուսի մետրից ավելի տարածք է զբաղեցնում, հաճախորդներին առաջարկվում են հյուրանոցի շուրջ 4000 համարները: Համալիրի տարածքում կա նաեւ արհեստական լճակ՝ 32 հազար քառակուսի մետր մակերեսով: Այս երկու գործարքները կատարելու համար Քըրֆորյանին անհրաժեշտ է հակամենաշնորհային մարմինների թույլտվությունը: Քըրֆորյանի հիմնադրած «Թրասինդա» ընկերությունը արդեն իսկ «Էմ Ջի Էմ միրաժ»-ի բաժնետոմսերի 56 տոկոսի սեփականատերն է:

Գիտելիքահենք հասարակություն դառնալուն խանգարում է մեր սնամպարծությունը

ՈՐԻՉԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթության մեջ 21-րդ դարում» միջազգային եռօրյա գիտաժողով հրավիրելու անհրաժեշտությունը (21-23 մայիսի) Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը երեկ բացատրեց նշյալ 2 ոլորտների արագընթաց զարգացմամբ ու փոխկապակցմամբ, ինչից մենք դեռեւս բավականին հետ ենք մնում: Խոսքը էլեկտրոնային գրադարանների ու հեռաուսուցման մասին է: Ժամանակակից կրթական ոլորտում կարեւոր տեղ է հատկացվում էլեկտրոնային գրադարաններին, քանի որ դրանք գալիս են փոխարինելու իրենց դարն ապրած թղթե քարտերին, գրադահոցներին, պատառոտված գրքերին: Դրանք համակարգչային միջավայր տեղափոխելով, դասախոսին եւ ուսանողին հնարավորություն է տվում օրվա ուզած ժամին ստանալ իրենց հետաքրքրող նյութը, գիտական ուսումնասիրությունը, պատմական փաստերն ու տվյալները:

Բաց հասարակության ինստիտուտի ֆինանսավորմամբ հայաստանյան գրադարանների համահավաք գրացուցակի ձեւավորման աշխատանքները սկսվել են 2001 թվականից ու կշարունակվեն եւս մի քանի տարի: Ծրագիրը ղեկավարում է ազգային գրադարանը, ընդգրկված են մեր 13 խոշոր գրադարանները, ապագայում նախատեսվում է ավելացնել դրանց թիվը:

«Դա ճկուն համակարգ է, գրքի մատենագիտական նկարագրությունը կատարվում է միայն 1 անգամ, մյուս գրադարանները պարզապես ավելացնում են իրենց գրադարանների կողը: Համակարգը թույլ է տալիս պատկերացնել, թե ինչ գրականություն կա հայաստանյան գրադարաններում, որ գրքից քանի օրինակ է, որտեղ են դրանք գտնվում, եւ իրականացնել էլեկտրոնային սպասարկում: Թվային քարտարանի ստեղծումը ամենածանր աշխատանքներից մեկն է, որովհետեւ ամեն մի էլեկտրոնային գրադարան առանց քարտարանի հնարավոր չէ պատկերացնել:

Տես էջ 2

Հայ խաղաղապահների 7-րդ հերթափոխը մեկնեց Կոսովո

Երեւանի մայրաքաղաքային գնդում երեկ Կոսովո մեկնող հայ խաղաղապահների 7-րդ հերթափոխը ճանապարհելու հանդիսավոր արարողությանը ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանը ընդգծել է հայ խաղաղապահների կայուն ներդումը միջազգային անվտանգության ապահովման գործում: Նախարարի խոսքերով, հայ խաղաղապահները թե՛ Կոսովոյում, թե՛ Իրաքում վստահելի գործընկերոջ համբավ են ձեռք բերել, իսկ հայ խաղաղապահների ծառայության բարձր մակարդակը գնահատում են նաեւ առաքելություն իրականացնող մյուս երկրները:

Անփորձանք ծառայություն մաղթելով խաղաղապահ առաքելության վեցամսյա ճանապարհ մեկնող զինծառայողներին՝ պաշտպանության նախարարը Կոսովոյում եւ Իրաքում խաղաղապահ առաքելություն իրականացրած մի շարք զինծառայողների է հանձնել «Անդրանիկ Օզանյան» եւ «Վազգեն Սարգսյան» մեդալներ, պատվոգրեր:

ՏՈՒՐՔ

Համանախագահների հերթական տուրնեն տարածաշրջան՝ այս անգամ երկուսով

Արդեն առանձնակի որեւէ նորության կամ առաջընթացի հույս չեն արթնացնում դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան այցելությունները, բազմաթիսի հանդիպումները Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների ու արտգործնախարարների հետ:

Հերթական անգամ Երեւանում են համանախագահները, որ այսօր առավոտյան միայն կհանդիպեն լրատվամիջոցներին՝ երեկ արդեն իսկ խորհրդակցելով ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի եւ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովի (Ռուսաստան) ու Բերնար Ֆասիեի (Ֆրանսիա) Վարդան Օսկանյանի հետ հանդիպմանը, ՀՀ արտգործնախարարության հաղորդագրության համաձայն, շեշտը դրվել է Լեռնային Ղարաբաղի բանակցություններում դեռեւս չհամաձայնեցված հարցերի վրա: Վարդան Օսկանյանը եւ համանախագահները ննջարկել են նաեւ հաջորդ հանդիպումների օրացույցն ու առաջիկա անելիքները:

Մերզլյակովն ու Ֆասիեն կայցելեն նաեւ Բաքու, որից հետո, ինչպես նախապես տեղեկացվել էր, ամենայն հավանականությամբ տեղի կունենա համանախագահների լիարժեք կազմով այցելություն տարածաշրջան արդեն հունիսին՝ ի վերջո համաձայնեցնելու Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, որ ամենայն հավանականությամբ տեղի կունենա Սանկտ Պետերբուրգում:

Ա. Հ.

Գյումրիում կրակոցները չեն դադարում

Մայիսի 22-ին, ժամը 21.30-22.00-ի սահմաններում Գյումրիի Երեւանյան խճուղու թիվ 3 հասցեում գտնվող «Կարո» բենզալցակայանում կրկին կրակահերթ է տեղի ունեցել: Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ վերը նշված վայրից ինչ հեռու փոխհրաձգությունից տուժել էին նաեւ պատահական անցորդներ: Իսկ մայիսի 22-ին, ըստ շրջանառվող լուրերի, երկու անձինք վիճել են եւ շարունակել են վեճը երկաթգծի տարածքում, որը բենզալցակայանից 20 մետր հեռավորության ունի: 26-ամյա Արսյոմ Ռոբերտի Փիլոյանի եւ բենզալցակայանի տնօրեն Հովհաննես Առաքելյանի վեճը շարունակվել է մոտ 10-15 րոպե: Ա. Փիլոյանը այնուհետեւ իր մոտ եղած զենքից կրակահերթ է բացել Առաքելյանի ուղղությամբ ու դիմել փախուստի: «Ազգը» փորձեց Գյումրիի ոստիկանությունից, դատախազությունից տվյալներ ստանալ, սակայն ապարդյուն, ասում էին. «Ջեռնարկվում են միջոցառումներ Արսյոմ Փիլոյանին հայտնաբերելու ուղղությամբ, կատարվում է նախաքննություն»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԱՐՅԱՆ

Վերաբացվեց Երեւան-Բեյրութ-Երեւան չվերթը

Ինչպես տեղեկացանք «Արմավիա» ընկերությունից, մայիսի 22-ին, մի քանի ամսվա դադարից հետո, վերաբացվեց Երեւան-Բեյրութ չվերթը: Հաջորդ օրը՝ մայիսի 23-ին տեղի ունեցավ Բեյրութ-Երեւան թռիչքը: Այսուհետեւ Երեւան-Բեյրութ ուղղությամբ թռիչքները տեղի կունենան շաբաթական մեկ անգամ՝ չորեքշաբթի օրերին:

Հիշեցնենք, որ սկսած 2006 թ. հուլիս ամսից, երբ ռազմական գործողություններ սկսվեցին Լիբանանի եւ Իսրայելի միջեւ, «Արմավիա» դադարեցրեց թռիչքները դեպի Բեյրութ: Սակայն ավիաընկերությունը այդ օրերին մի քանի չվերթ կազմակերպեց, տեղափոխելու համար պատերազմական գոտում գտնվող մեր հայրենակիցներին:

Ա. Մ.

«ԽԱՉԱԳՈՂ» վեպի նոր գլուխները՝ «Ազգի» ուրբաթօրյա գրական հավելվածում եւ կայքէջում:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Տելեմարկետն» իրականացրել է անբարեխիղճ մրցակցություն

Նույն խախտումն են կատարել նաեւ մի շարք այլ ընկերություններ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովն իր երեկվա նիստում որոշել է, որ «Տելեմարկետ» հեռուստաընկերությունը մոլորության մեջ է գցել սպառողներին, եւ տվյալ հեռուստաընկերության պատվիրատու «Հեռուստաշուկա» ՍՊԸ գործունեությունը համարել է անբարեխիղճ մրցակցություն: Մի շարք ՁԼՄ-ների, այդ թվում «Ազգի» հրապարակման հիման վրա հանձնաժողովի հարուցած վարույթի ժամանակ պարզվել է, որ հեռուստաընկերության ժամանակ գովազդվող ապրանքները՝ էլեկտրական ավելը, կտրող դանակը, հագուստը չորացնող սարքը եւ բանջարեղենը կտրատող սարքը ոչ թե եվրոպական արտադրության են, ինչպես նշվում է հաղորդման մեջ, այլ չինական: Բացի այդ չափազանցված են ներկայացվել նաեւ այդ սարքերի որակական բնութագրերը:

Հանձնաժողովը երեկ անբարեխիղճ մրցակցության դրսեւորման մի շարք այլ փաստեր է հաստատել: Մասնավորապես «Պողոսյանի կոնյակի գործարան» ընկերությունը հանձնաժողովին հայտնել էր, որ իր կողմից արտոնագրված շշերն են արտադրում նաեւ «Ա. Օսիպյան», «Շիրակ եւ որդիներ» եւ «Հրաս» ընկերությունները:

Տես էջ 2

Հայաստանյան եւ օտար արեւելագետների ուսումնասիրությունները «Արամազդում»

Արեւմտյան գիտության, մասնավորապես արեւելագիտության մեջ երկար տարիներ տիրապետող է եղել այն թյուր կարծիքը, թե հայաստանյան գիտնականների ուսումնասիրությունները գիտականորեն թույլ են ու չափազանց ազգայնական: Նրանց այդ համոզումը երեւի թե երկար կմնար անփոփոխ, եթե լրջախոհությունը հայաստանյան հայագետներին չդրդեր դրա դեմ ընդվզելու միջազգային լեզվով ամսագիր ստեղծելու միջոցով: Այդ գաղափարը շոշափելի դարձավ խեթագետ Արամ Քոսյանի ու հայագետ Արմեն Պետրոսյանի խմբագրությամբ, ամերիկահայ Թերիլ եւ Արմեն Աշերների ստեղծած «Փրոջեկտ դիսքավերի» կազմակերպության աջակցության շնորհիվ, եւ արեւելագիտական միջազգային պարբերականների մեջ հայտնվեց Հայաստանում վերջերս լույս տեսած «Արամազդ» հանդեսի առաջին համարը: «Նախաձեռնելով այս հանդեսի հրատարակությունը, առաջին հերթին կարեւորեցինք այն հանգամանքը, որ Հայաստանում երբեւէ գոյություն չի ունեցել արեւմտյան լեզուներով հրատարակվող հայագիտական կամ արեւելագիտական ամսագիր, ի տարբերություն հարեւան երկրների: Մինչդեռ խաղաղասիրության պատճառով անհրաժեշտ էր, որ հայաստանյան գիտությունն ունենար այդպիսի պարբերական: Մ. Նահանգներում ու Ֆրանսիայում կան հայագիտական մի քանի ամսագրեր, որոնցում տպագրվող գիտնականների զգալի մասը հայերեն չի կարդում: Ահա թե ինչու մեր գիտնականների ուսումնասիրությունները Արեւմուտքին ճանաչելի դարձնելը մեզ համար առաջնային անհրաժեշտություն էր: Դրա կարիքը վաղուց էր հասունացել, կարծում եմ, պիտի արվեր անկախ պետություն դառնալու հենց առաջին տարիներին: Դրանով պարտավոր էր զբաղվել մեր պետությունը, սակայն այնպես ստացվեց, որ մի խումբ գիտնականներ իրենց վրա վերցրեցին այդ չափազանց աշխատատար գործը: Հանդեսը հովանավորող «Փրոջեկտ դիսքավերի» կազմակերպությունը ջանում է նպաստել հայաստանյան հնագիտության առա եւ հայագիտության ու հարակից գիտությունների զարգացմանը՝ ռեալ համագործակցություն ստեղծելով հայաստանյան եւ արեւմտյան գիտնականների միջեւ», ասում է Արմեն Պետրոսյանը:

Ի դեպ, հանդեսի առաջին համարում ընդգրկված են նաեւ թուրք գիտնականների գիտական հոդվածները: Խմբագրական կազմը ձգտում է հանդեսը հեռու պահել քաղաքականացումից, բեւեռվելով զուտ բովանդակության հարստության վրա՝ Հին ու Մերձավոր Արեւելքի երկրների քաղաքակրթություն, լեզու, մշակույթ, դրանց առնչությունների վերաբերյալ նոր բացահայտումներ, վերջին հետազոտություններ:

Թուրք գիտնականների հետ համագործակցությունը կարեւորվում է հատկապես այն առումով, որ Արեւմուտքում տարածված կարծիքի համաձայն, հայաստանյան հայագետները ազգայնականներ են ու թուրքատյացներ: «Թուրք գիտնականների հետ համագործակցությունը ցույց է տալիս, որ դա այդպես չէ: Իրենք համաձայնեցին գիտական կապեր ստեղծել մեզ հետ, մի բան, որ տարիներ առաջ քաղաքականապես ուղղակի հնարավոր չէր: Նրանք մեզ տամադրում են մեզ անհասանելի հնագիտական նյութեր մեր իսկ երկրի պատմության վերաբերյալ, ինչը մեզ համար վերին աստիճանի կարեւոր է»:

Թուրք գիտնականների ուսումնասիրություններից ամսագրի առաջին համարում տեղ են գտել Վելի Սեվինի «Դիտարկումներ այսպես կոչված «Ուրարտուի մայրաքաղաք» Թոփրաք Քալեի շուրջ» եւ Ալթան Ցիլինգիրողլուի «Ուրարտական ամրոց «Էիդուրու լեռան առջեւ». Այանիս» հոդվածները: Վերջինը Վանա լճի մոտ հայտնաբերված ուրարտական շրջանի Այանիս միջնաբերդի պեղումների մասին է: «Հեղինակը հայտնի գիտնական է, նրա աշխատանքները հիմնականում վերաբերում են Հայկական լեռնաշխարհի հին պատմությանը եւ հնագիտությանը: Ծագումով հայ է, մշեցի, Այանիսի պեղումների արշավախմբի ղեկավարը, նրա հետ աշխատում են աշխարհի լավագույն հնագետները»:

Ընդհանուր առմամբ ամսագրում ընդգրկվել են հայաստանյան եւ օտար գիտնականների 14 հոդվածներ, այդ թվում՝ Շտեֆան Կրոլի «Հետազոտություններ հարավային Կովկասում (Սյունիք 2000-2003 թթ)», Արամ Քոսյանի «Առնուվանդաս Ի-ը Արեւելքում», Նիկոլայ Հարությունյանի «Տարատեսակ զեներ ուրարտական սեպագիր տեքստում», Ջոն Գրեգինի «Ենթաշերտը հայերենում», Երվանդ Գրեկյանի «Մենուայի կամքը եւ Ուրարտուի աստվածները», Տորք Դալալյանի «Կովկասյան Սաթանայի /Սաթենիկ/ կերպարի եւ անվան շուրջ», Արմեն Պետրոսյանի «Խալդի եւ Միթրա/Միհր»:

Հանդեսը ստեղծողների համար ամենադժվարին խնդիրն այժմ ամսագրի տարածումն է՝ նվիրատվությամբ ու բաժանորդագրությամբ: Ամսագրի ճաշակավոր շարադրանքը միանգամից պատկերացում է տալիս, թե որքան են խմբագիրները ջանացել միջազգային հեղինակավոր պարբերականների չափանիշներով տպագրվելու: Անկասկած, ամսագիրն իր յուրահատուկ տեղն ու դերը կունենա արդի արեւելագիտության բնագավառում, նաեւ կհետաքրքրի հայագիտությամբ հետաքրքրվող յուրաքանչյուրին, քանի որ միայն նրա էջերից կարելի է տեղեկանալ, որ Հռոմեական կայսրությունում Ք.հ.Ի դարից տարածված միթրայական կրոնական ուսմունքը, որին վերագրվել է իրանական ծագում իրականում հայաստանյան-հայկական է, կովկասյան էպոսների գլխավոր հերոսուհին՝ Սաթանան իր անունը ստացել է հայկական Սաթենիկից եւ այլն, եւ այլն:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ



ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանցի զինվորը վախենում է վերադառնալ Ադրբեջան

Հայաստանի կառավարությունը պետք է որոշի, թե ինչպես վարվի ադրբեջանցի դասալիք Սամիր Մամեդովի հետ, որը չի ցանկանում վերադառնալ Ադրբեջան: Այդ մասին «Ազատություն» ռադիոկայանին հայտնել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ռազմագերիների պատշաճության հարցերով համակարգող Քիարա Տրավերսոն:

Անցած շաբաթ «Կենտրոն» քաղաքատարողական հիմնարկում Մամեդովին այցելել են Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները, որոնց վկայությամբ Մամեդովը «Ադրբեջան վերադառնալ չի ցանկանում, չի ցանկանում նաեւ մեկնել այլ երկիր՝ վախենալով, որ այլ երկրներում բնակվող ադրբեջանցիները կարող են իր հետ հաշվեհարդար տեսնել»: Սամիր Մամեդովը 2006 թ. դեկտեմբերին կամովին հանձնվել է հայկական կողմին: Հայաստանի օմբուդսմենի աշխատակազմի ներկայացուցիչների վկայությամբ՝ նա «ցանկանում է մնալ եւ աշխատել Հայաստանում»:

Քիարա Տրավերսոն հայտնել է, որ ներկայումս Կարմիր խաչի միջազգային կոմիտեն «կոնֆիդենցիալ բանակցություններ» է վարում Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների հետ: «Եթե Մամեդովը ցանկանա վերադառնալ Ադրբեջան, մենք կարող ենք հանդես գալ որպես չեզոք դերակատար», նշել է Տրավերսոն:

Մնաց Բաֆուն բողոքի, որ հայերն այցելում են Արցախ

Արցախում անցկացվելիք «Դար» երգի փառատոնին կմասնակցեն կատարողներ Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Իրանից, Ուկրաինայից, ԱՄՆ-ից, Բուլղարիայից: «Ազերիպրես» գործակալության տեղեկացմամբ, Ադրբեջանը պատշաճական բողոք կոտրի այն երկրներին, որոնց ներկայացուցիչները կառավարական գծով կմասնակցեն «Դար» փառատոնին:

«Հայության հիշողության» մասին գիտաժողով եւ կենտրոն Լիոնում

Մայիսի 25-26-ին Հայաստանի կրթության նախարարության եւ Ֆրանսիայի մշակույթի նախարարության հովանավորությամբ Լիոնում տեղի կունենա «Հայության հիշողության» մասին գիտաժողով: «Պանարմենիքն.նեթ» կայքէջի տեղեկացմամբ, այս մասին հայտարարել է Եվրոպայի Հայկական դաշնության (EAFJD) նախագահ Հիլդա Ցոբոյանը: Գիտաժողովի աշխատանքներին կմասնակցեն գիտնականներ, պատմաբաններ եւ ազգագրագետներ Ֆրանսիայից, Հայաստանից եւ եվրոպական այլ երկրներից: Գիտաժողովի ավարտին կհայտարարվի «Հայության հիշողության կենտրոնի» ստեղծման մասին՝ որոշ Ֆրանսիայի տարածքում եւ եվրոպական այլ երկրներում նման կենտրոնների ցանց ստեղծելու նպատակով:

«Տելեմարկետն» իրականացրել է ...

1-ին էջից

«Սախա» ընկերության արտադրած «Գոլդ կոֆի» սուրճ փաթեթի վրա զետեղված ադրանշային նշանը շփոթության աստիճանի նման է «Նեսկաֆե» հանրահայտ ադրանշային նշանին, իսկ «Ամեն Հովիկ» ընկերության արտադրած «Սակաֆեի» ադրանշային նշանը շփոթության աստիճանի նմանեցված է «Պելե» ադրանշային նշանին: «Ունիվերսալ գրուպի» կողմից իրացվող COOPOLLA անվանմամբ արտադրված եգիպտացորենի յուղն (ձեթը) էլ նմանեցված է COOPOLIVA ադրանշանիշին: Սակայն նշվեց նաեւ, որ 2006 եւ 2007 թթ. այդ անվանումով ձեթ չի ներմուծվել:

Անբարեխիղճ մրցակցության դրսեւորման երեւ դեպք առնչվում էին ռուսական «Խլեբնայա դորոգա» օդու ադրանշանիշի նմանեցմանը, որը պատկանում է ռուսական «Վեդա ֆինանս» ընկերությանը: Իրենց արտադրության օրիներն այդ ադրանշանիշին են նմանեցրել «Սալեխ գուրը», «Սիս ալկոն» եւ «Բյուկ կոնցեռնը»: Մերձավանի ոգելից խմիչքների գործարանն էլ արտադրել է «Մոսկովսկայա» անվանումով օղի, մինչդեռ այդ ադրանշանիշը պատկանում է հոլանդական Sprits International N.V. ընկերությանը:

Վերոնշյալ բոլոր խախտումները հանձնաժողովը որակեց որպես անբարեխիղճ մրցակցության դրսեւորումներ, որոնց համար, համաձայն օրենքում կատարված վերջին փոփոխությունների, նախատեսված է 500 հազար դրամ տուգանք: Սակայն քանի որ այդ խախտումները կատարվել են մինչ օրենքում փոփոխություններ կատարելը, որոշվեց նրանց տուգանել օրենքի նախկին խմբագրմամբ նախատեսված չափով՝ 100-հազարանոց դրամով: Միաժամանակ տնտեսվարողներին հանձնարարվեց դադարեցնել իրավախախտումը եւ մեկամսյա ժամկետում շրջանառությունից հանել այդ ադրանշները:

Գիտելիքահենք հասարակություն դառնալուն խանգարում է մեր սնապարծությունը

1-ին էջից

Հաջորդ քայլը տեքստերի թվայնացումն ու դրանց տեղադրումն է, նույնպես ժամանակ ու միջոցներ պահանջող է: Մեր համահավաք գրացուցակում արդեն մուտքագրած է մոտ 1 մլն 600 հազար մատենագիտական գրառում: Եթե հաշվենք, որ ազգային գրադարանն ունի մոտ 7 մլն գիրք, կարելի է ասել, որ այդ աշխատանքները կավարտենք 4-5 տարվա ընթացքում: Խոչընդոտող ոչինչ չկա, պարզապես անհրաժեշտ են միջոցներ ու կրթված կադրեր»:

Առանց թվային գրադարանի անհնար է պատկերացնել հետազոտությունը, քանի որ դրա համար անհրաժեշտ է լավագույն պրոֆեսորների դասախոսությունները տեղադրել ինտերնետում՝ ավանդական լսարանում գոյություն ունեցող դասախոսական բոլոր հնարքներով՝ տեսական նյութի ճնշարկում, աշխատանքային խմբերի ձեւավորում, հանձնարարությունների կատարում, գնահատում, թեստային համակարգի կիրառում: Այն ամենն, ինչ թույլ են տալիս հեռաուսուցման ժամանակակից համակարգերը: Երեւանի պետական համալսարանում արդեն 2 տարի իրականացվում է թվային կրթական պատարների ձեւավորման նախագիծը, որում ներառված է նաեւ հեռաուսուցման փորձարկումը: Արդեն իսկ 16 դասախոսներ պատրաստել են տիլոցային դասընթացներ, որոնք շուտով կփորձեն տրամադրել ուսանողներին:

Տեղեկատվական հասարակություն դառնալու ճանապարհին մեր ամենից խայտառակ խնդիրը Զարգարյանը համարեց ինտերնետի ոչ այնքան մատչելի գինն ու ծառայության որակը, որոնց պայմաններում գիտելիքահենք հասարակություն ունենալու մասին խոսակցություններն ընդամենը միֆ են, բարի ցանկություն: «Պարծենում ենք մեր երիտասարդ ծրագրավորողներով, բայց, ներեցեք, աշխարհի ո՞ր երկրում երիտասարդները լավ չեն ծրագրավորում: Ժամանակի պահանջն է, երիտասարդների մեջ դրված է համակարգչից օգտվելու ունակությունը: Դրանք չափանիշներ չեն, որ հիմա փորձում ենք զարմացնել զարգացած երկրներին»: Գրեթե համընդհանուր համակարգչային անգրագիտության միջավայրում ենք ապրում՝ միջին սերունդն ընդհանրապես գիտելիքներ չունի, համակարգիչների քանակը դեռեւս բավականին փիչ է գրադարաններում, համալսարաններում, կենցաղում: «Եթե ցանկանում ենք տեղեկատվական ընկալումների առումով կիրթ հասարակություն ունենալ, պետք է համակարգչային սովը վերացնենք գներն իջեցնելով, ներկրումը մեծացնելով եւ այլ միջոցներով»:

Զարգարյանն առանձնացրեց զարգացած երկրներում մերժելի եւ մեկ երեւույթ՝ համակարգչային ծրագրերի անօրինական կիրառումը, որ լայն տարածում ունի մեզանում: Դրանց հեղինակային իրավունքը, նրա ասելով, այստեղ պահպանում են միայն միջազգային կազմակերպությունները, մյուս հիմնարկներում, հատկապես հրատարակչություններում, խախտվում են հեղինակային բոլոր իրավունքները: Զարգացող երկրներին խիստ բնորոշ այս խնդիրը քննարկվել է նաեւ գիտաժողովում, առաջարկվել են դրա դեմն առնելու միջոցներ:

«Պետք է հասկանանք, որ գողությամբ ենք զբաղված ու պետք է վերջ տանք դրան: Հազար դրամով կարելի է ուզածդ համակարգչային ծրագիրը գնել: Մտավոր աշխատանք ստեղծողները մեզանում անպատշաճ են, նույնը ծրագրավորման շուկայում է՝ մասնագետները ծրագիր են գրում, հետո դրանք շրջանառվում են անվճար: Եթե կարողանանք այս ամենն ինչ-որ չափով քաղաքակիրթ շուկա բերել, գուցե այդ ժամանակ կարելի է ասել, որ տեղեկատվական հասարակություն ենք: Այլապես մնացածը լսարանին հրապուրելու քաղաքական արավներ են, թե՝ տեսեք, մենք ինչքան զարգացած ենք: Իրականում ոչինչ էլ չկա»: Գիտաժողովին մասնակցել են Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Մ. Նահանգների, Մոնղոլիայի, մերձբալթյան երկրների, Վրաստանի եւ այլ երկրների առաջատար համալսարանների մասնագետները: Ընդօրինակելի էր հատկապես եվրոպացի գործընկերների փորձը, ակտուալ՝ մերձբալթյան երկրներինը, իսկ մյուսների հետ պարզապես փորձի փոխանակում էր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 76 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Տեսընտրական նյարդամսխումներ եւ պարզաբանումներ



Կենտրոնական ընտրական հանձնաժողովում «Արդարություն» դաշինքի, իսկ ավելի ստույգ՝ ՀԺԿ ներկայացուցիչ Ֆելիքս Խաչատրյանը վիրավորված է ԿԸՀ նախագահ Գարեգին Ազարյանից, որը վերջին ԿԸՀ նիստում հայտնել էր ՀԺԿ-ից ստացած մի զանգի մասին: Ազարյանին տեղեկացրել էին, թե Ֆ. Խաչատրյանը անօրինական ձեւով է ԿԸՀ անդամ դարձել, քանի որ 2003 թ. ընտրություններին ընդգրկված է եղել «Արդարության» համամասնական ցուցակում: Ֆ. Խաչատրյանը, բավական խիստ ոտնձգներ անելով ԿԸՀ նախագահի իրազեկության եւ գիտելիքների ուղղությամբ՝ նկատեց, թե վերջինս չի տիրապետում ընտրական օրենսգրքին կամ կարդացել է ԸՕ-ի մինչեւ 34-րդ հոդվածը, այն է՝ ընտրությունների արդյունքների վրա ազդեցություն ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցները (ԿԸՀ անդամը եւս) պետք է հրաժարական տան որպես պատգամավորության թեկնածու գրանցման պահից սկսած: Ֆ. Խաչատրյանը փաստերով ապացուցեց, որ ինքը 2003 թ. ընտրությունների ժամանակ ԿԸՀ անդամ չի եղել, այլ միայն 2 ամիս դրանից հետո. «Մի՞թե երկու ամիս առաջվա ընտրությունների արդյունքների վրա կարող էի ազդել երկու ամիս հետո ԿԸՀ անդամ նշանակվելով», հարցրեց նա: Ըստ ՀԺԿ ներկայացուցչի՝ եթե ԿԸՀ նախագահը կարդացած լիներ ԸՕ-ի 41-րդ, հետո նաեւ 111-րդ հոդվածները, կըմբռներ նրա տրամաբանությունը: Դժվար թե Գարեգին Ազարյանը կարդացած չլինի ԸՕ-ն, սակայն Ֆ. Խաչատրյանի հոետորական հարցումները համատեքստում այսպիսի հարցումը հնչում էր: Ըստ նրա՝ եթե օրենքի պահանջը հասվածական է դիտում ԿԸՀ նախագահը, այդ դեպքում նույն տրամաբանությամբ պետք է զանգահարած լինեին այլ կուսակցություններից, որոնց անդամները 2003-ին եղել են համամասնական ցուցակներում, բայց ընտրություններից հետո ներկայացվել եւ հաստատվել են ԿԸՀ անդամի պաշտոնում: Օրինակները ՄԱԿ-ից եւ ՀՀԿ-ից էին: Օրինակ՝ Աբրահամ Բախչագուլյանը եղել է ՀՀԿ նախկին ցուցակի 52-րդ տեղում, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ ՄԱԿ-ը ներկայացնող անդամների մեջ կան նրա համամասնական ցուցակում եղած մարդիկ: Մի խոսքով՝ Ֆելիքս Խաչատրյանը լրագրողներին ապացուցում էր, որ իր նկատմամբ ԿԸՀ նախագահին անարդար է վարվել՝ ասելով, թե օրենքի է խախտել, մինչդեռ իր հեղինակությունն ու արժանապատվությունը նա ամեն ինչից բարձր է գնահատում:

Անդրադառնալով ՀԺԿ պարտությանը՝ ՀԺԿ-ական ԿԸՀ-ականը, որը մոտ ապագայում վայր կդնի իր լիազորությունները ողջ ԿԸՀ-ի հետ, նկատեց, թե իր կուսակցությունը ոչ մի վատ բան չի արել եւ չի կորցրել իր ընտրազանգվածը, իսկ պարտվել է, քանի որ ընտրությունները խախտումներով են անցել: Ունեցած խախտումները ՀԺԿ-ն կտրամադրի այն մեկ կուսակցությանը, որը կդիմի Սահմանադրական դատարան:

Ի դեպ՝ «Ժառանգություն» կուսակցությունն իր ունեցած ընտրակեղծիքները տրամադրել է «Հանրապետություն» կուսակցությանը՝ պատճառաբանելով, թե դրանք բավարար հիմք չեն տալիս Սահմանադրական դատարանում վիճարկելու ընտրությունների արդյունքները, ավելի լավ է սատարի վիճարկողին: Երեւում է՝ այսպես են վարվելու նաեւ մյուս ընդդիմադիր կուսակցությունները, սատարելով մեկ դիմողի: Իսկ թե ո՞վ կդիմի՝ շուտով կերեւա: Մանավանդ որ դրա համար շատ ժամանակ չի մնացել՝ ըստ ընտրական օրենսգրքի, համամասնական ընտրությունների արդյունքները կարելի է վիճարկել վերջնական ամփոփումից 7 օր հետո, մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով ՍԴ կարելի է դիմել վերջնական արդյունքների ամփոփումից եւ վավերացումից հետո 7-րդ օրը միայն: Սխա՞լ է, թե նախօրոք լավ մտածված լավ հնարք՝ դժվար է ասել: Մի բան ակնհայտ է՝ եթե որեւէ ուժ դիմի Սահմանադրական դատարան, գուցե եւ այդ պատճառով ուշանա նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, կառավարության հրաժարականի եւ նոր կառավարության կազմավորման ժամանակացույցը, քանի որ մինչեւ Սահմանադրական դատարանի որոշումը գործընթացն օրենսդրությամբ պետք է որ կասեցվի: Տեսնենք, թե ուր են տանում զարգացումները:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ով կռվում է մանդատի համար, ով՝ հրաժարվում

«Ժառանգություն» կուսակցության համամասնական ցուցակի վեցերորդ համարում ընդգրկված Ցարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Հենրիկ Բախչինյանը հրաժարվել է մանդատից՝ դիմում ներկայացնելով ԿԸՀ: Ըստ կուսակցության համամասնական ցուցակի, խորհրդարան էր անցել ցուցակի թիվ 7 հորիզոնականն զբաղեցնող Ցարուհի Փոստանջյանը: Այժմ համարները կտեղաշարժվեն եւ Բախչինյանի փոխարեն խորհրդարան կմտնի ավելի վաղ ցուցակի 8-րդ տեղում գտնվող Արմեն Մարտիրոսյանը:

Ի դեպ, տարբեր լուրեր են պտտվում, որ պատգամավորական մանդատից պատրաստվում են հրաժարվել նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակի առաջին տեղերում ընդգրկված եւ պատգամավոր դարձած չորս-հինգ՝ տարբեր հիմնարկների ղեկավարներ, որոնք իրենց գրաված դիրքը բարձր են դասում պատգամավորի մանդատից: Սակայն առայժմ դրանք խոսակցությունների մակարդակով են, քանի որ ԿԸՀ-ն առայժմ ստացել է միայն Հենրիկ Բախչինյանի՝ մանդատից հրաժարվելու վերաբերյալ դիմումը:

Մ. Խ.

Շարունակում են լքել «Օրինաց երկիրը»

Այս անգամ լքելու ուղին է բռնել մեծամասնական ընտրակարգով ընտրված կուսակցության միակ ներկայացուցիչ Սամվել Բալասանյանը: Թիվ 35 ընտրատարածքից (Գյումրի) պատգամավոր ընտրված Բալասանյանն այլեւս չի ցանկանում լինել «Օրինաց երկիր» խմբակցության կազմում: Արդեն իսկ դիմում է ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, նշելով. «Խնդրում եմ առաջիկա հինգ տարիներին ինձ չընդգրկել «Օրինաց երկիր» խմբակցությունում»: Կուսակցությունում լինելն էլ Բալասանյանի անցյալի որոշումների շարքում է մնացել. երեքշաբթի՝ մայիսի 22-ին պատգամավորը դիմել է կուսակցությունից դուրս գալու համար: Երրորդ գումարման ՀՀ ԱԺ «Օրինաց երկիր» խմբակցության ղեկավարը նախորդ տարի խմբակցության նոստրացման փուլում իր մնալ-գնալու մասին հարցին ի պատասխան լրատվամիջոցներից մեկին փաստել էր. «Ես 52 տարի ապրել եմ եւ ճիշտ եմ ապրել, ես 2 տղա երեխա ունեմ, որ նոր կյանք են մտնելու, նրանց չե՞ն ասի՝ բա էս հերդ ինչ կասարեց»: Սամվել Բալասանյանից առաջ, մինչեւ խորհրդարանական ընտրությունները ՕԵԿ-ը լքել էր գարեջրի գործարանի եւս մեկ սեփականատեր, Տավուշի թիվ 41 ընտրատարածքում առաջադրված Հակոբ Հակոբյանը եւ իր անդամությամբ անմիջապես էլ համալրել ՀՀԿ շարքերը: Իսկ Հակոբ Հակոբյանին նախորդածների թիվը տասնյակով է հաշվվում, որոնք ՕԵԿ ընդդիմադիր թեւ անցնելու հետ մեկտեղ սկիզբ առան, բայց դա արդեն անցած ու ներկայացված պատմություն է, հետեւաբար չանդրադառնանք: Ի դեպ, ՕԵԿ փոխնախագահ Հեղինե Բիշարյանի գնահատականով, Սամվել Բալասանյանի քայլի բացատրությունը պատգամավորական մանդատի պահպանման գինն է. «Ամենայն հավանականությամբ նա պատգամավորական աթոռ ստացավ ու որոշեց, որ կարելի է դուրս գալ կուսակցությունից»: Հետեւությունն արդեն հնացած է, բայց արդիական՝ Հայաստանում գործարար լինելու համար պետք է ՀՀԿ անդամություն ունեցող պատգամավոր լինել կամ էլ ՀՀԿ կողմից օգտագործված քաղաքական ուժի ներկայացուցիչ, այլապես, մեղմ ասած, օդը կփակեն:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Երեւան ջուրը» խոստանում է ջրամատակարարման ամառային ժամանակացույցի բարելավում

Երեւանի ջրամատակարարման համակարգում իրականացվող աշխատանքներին երեկ լրագրողները ծանոթացան, լինելով Կոմիտասի, Մամիկոնյան, Գրիբոյեդովի փողոցներում, որտեղ «Երեւան ջուր» ընկերության աշխատակիցները տեղադրում էին նոր խողովակներ ու սարքավորումներ: Այցելության ժամանակ ընկերության գլխավոր տնօրեն Սերժ Պողոսը մանրամասներ հայտնեց պայմանագրային առաջին տարում «Երեւան ջրի» իրականացրած ներդրումների եւ ծրագրերի մասին: Մասնավորապես ձեռք են բերվել 470 մլն դրամ արժողությամբ նյութեր եւ սարքավորումներ՝ համակարգի շահագործման որակը բարելավելու նպատակով: Դրանք հոսակորուստների հայտնաբերման կորելատորներ են, բեռնատարներ, էքսկավատորներ, մեքենաներ, կոմպակտորներ, գրասենյակային եւ համակարգչային այլ միջոցներ: Բացի այդ, իրականացվում են շինությունների նորոգման եւ պահպանման աշխատանքներ: Այդ նպատակով կներդրվի 800 մլն դրամ:

Երեւանցիներին առավել հետաքրքրող նորությունն այն էր, որ 2007 թ.-ի ամռանը մայրաքաղաքի ջրամատակարարման ժամանակացույցը նախորդ տարվա ամառվա համեմատ կբարելավվի 45 տոկոսով:

Սերժ Պողոսը մեկ անգամ եւս նշեց, որ ընկերության առաջնահերթ խնդիրն այժմ շարունակական ջրամատակարարում ապահովելն է: Նրա հավաստմամբ՝ պայմանագրային վերջին՝ 10-րդ տարում «Երեւան ջուրը» պարտավորվածություն է ստանձնել շուրջօրյա ջրամատակարարում ապահովել մայրաքաղաքի 95 տոկոսի համար: Այդ նպատակով պետք է նվազեցվեն նաեւ կորուստները՝ ներկայիս 80 տոկոսից հասցնելով մինչեւ 50-55 տոկոսի:

Ա. Մ.

Հելսինկյան ասամբլեան ակնկալում է, որ Եվրոպայի խորհուրդն ու ԵԱՀԿ-ն կփոխեն ընտրություններին տված իրենց գնահատականը



Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաֆունցը երեկ «Փաստարկ» ակումբում հույս հայտնեց, որ Եվրոպայի խորհուրդն ու ԵԱՀԿ-ն Հայաստանի խորհրդարանական ընտրություններին տված իրենց նախնական գնահատականը կփոխեն: Նա վստահ է, որ այդ կազմակերպություններն իրենց գնահատականները կարող են տալ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով: Այնուամենայնիվ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարն ակնկալում է, որ երբ իրենք հիշյալ կազմակերպություններին ներկայացնեն հայաստանյան խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իրենց զեկույցը, վերջիններս անպայման հաշվի կառնեն եւ նախնական գնահատականներում փոփոխություններ կանեն:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրականացրել է մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների դիտարկում Լոռու եւ Տավուշի մարզերում, ինչպես նաեւ Վայք, Սիսիան եւ Գյումրի քաղաքներում: Գրասենյակը դիտարկել է նաեւ նախընտրական քարոզչության շրջանը՝ ապրիլի 8-ից մայիսի 10: Արթուր Սաֆունցի խոսքով, դիտորդական գործունեությամբ իրենք արձանագրել են, որ կուսակցությունների, թեկնածուների քարոզչության ընթացքում եղել են ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ուղղակի ազդեցություն են ունեցել քաղաքացիների ազատ կամքի դրսեւորման վրա: Սաֆունցի ներկայացմամբ, այդ խախտումներից են ընտրակաշառքների բաժանումը, բարեգործական օգնությունների եւ ծառայությունների մատուցումը, նախընտրական հանդիպումների եւ տպագիր նյութերի տարածման արգելքները, ճնշումներն ու սպառնալիքները:

Արթուր Սաֆունցը նշեց, որ վարչական ռեսուրսներն օգտագործվել են հօգուտ հանրապետական կուսակցության, ինչն անհավասար պայմաններ է ստեղծել մյուս կուսակցությունների համար, իսկ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը անդամագրման համար օգտագործել է ֆինանսական ռեսուրսներ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարն ասաց, որ, օրինակ, թիվ 30 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Վիկտոր Դալլաքյանին արգելել են դպրոցներում հանդիպումներ կազմակերպել. «Ուսուցիչներն ասել են, որ իրենք արդեն կողմնորոշված են եւ նախընտրում են հանրապետական կուսակցությունը»:

Քվեարկության օրվա ընտրախախտումներին անդրադառնալով՝ Արթուր Սաֆունցը նշեց, որ ընտրացուցակներում եղել են անհամապատասխանություններ, ընտրատեղամասերում գրանցվել են պարբերական կուտակումներ, տեղամասային հանձնաժողովներն էլ անտեսել են տեղամասերում արձանագրված ընթացակարգային խախտումները:

Ակումբի հյուրը միաժամանակ ընդգծեց, որ 2003 թ.-ի համեմատ այս ընտրություններն, իհարկե, հաջող էին: Սաֆունցը համոզված է, որ դրանում իր դերակատարությունն է ունեցել Եվրոպական խորհրդի ներկայացուցչի հայտարարությունը, ինչպես նաեւ «Հազարամյակի մարտահրավերներ» կորպորացիայի ներկայացուցչի հայտարարությունը՝ մեր երկրին տրվող ֆինանսական օգնության շարունակականության մասին: Նա համոզված է, որ այս հանգամանքներն ունեցել են իրենց ազդեցությունը:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավարն ասաց, որ իրենք պատրաստ են ընտրախախտումների իրենց ունեցած տվյալները փոխանցել յուրաքանչյուր քաղաքական ուժին եւ կազմակերպությանը: Նրա խոսքով, իրենք արդեն իրենց տվյալները տրամադրել են «Իմքիչմենս» դաշինքին:

Գ. Գ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մերկ իրավունք»

2007 թ. մայիսի 12-ին առաջին անգամ արտասահմանում գտնվող հայությունը մասնակից չդարձավ հանրաքվեական նշանակության ընտրություններին: Անակնկալի եկած հայերը խվեարկության օրը էլեկտրոնային փոստով բողոքի նամակներ էին ուղարկում հայաստանյան լրատվամիջոցներին՝ զայրույթ արտահայտելով իրենց ընտրական իրավունքի վրա բռնանալու կապակցությամբ: Միաժամանակ փորձում էին ըմբռնել, թե ինչո՞ւ արտասահմանում գտնվող Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունները ոչ մի բացատրություն չտվեցին Հայաստանում ընթացող այդ կարետրագույն գործընթացից իրենց դուրս մղելու համար:

ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններով ու լրացումներով, որոնք ուժի մեջ մտան 2007 թ. մարտ ամսից, արտասահմանում բնակվող հայաստանցիներին փաստացի զրկեցին ընտրելու իրավունքից: ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Հայաստանի Հանրապետության եւ միաժամանակ այլ պետության քաղաքացի եւ ՀՀ-ում հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրությունների ժամանակ խվեարկություններին չեն մասնակցում»:

Օրենսդրական այս փոփոխությունները խորհրդարանն ընդունեց շտապեցնելով՝ շահարկելով այն միտքը, որ «Երկքաղաքացիության մասին» օրենքի ընդունումից հետո սփյուռքը կարող է ազդեցիկ դառնալ Հայաստանի ընտրական գործընթացներում: Առաջիկա խորհրդարանական ընտրություններով տարված պատգամավորներին չսթափեցրին «Քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու՝ կառավարության օրինագիծը ներկայացնող արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի հորդորները՝ զերծ մնալ ավելորդ շահարկումներից, քանի որ «մենք կանգնած ենք շտապասխանատու եւ պատմական որոշում կայացնելու առաջ»:

Սահմանադրական փոփոխություններից հետո խորհրդարանն սկսեց քննարկել երկքաղաքացիության օրենքի վիճահարույց կողմերը, որոնցից մեկը երկքաղաքացիների ընտրական իրավունքի խնդիրն էր: Ներկայացված օրինագծին առարկողները պնդում էին, որ երկքաղաքացիներն ընտրելու իրավունք չպետք է ունենան, քանի որ դրա միջոցով այլ պետությունները կկարողանան միջամտել Հայաստանի ներքին կյանքին: Մյուսները պնդում էին, որ երկքաղաքացիներին ընտրություններին մասնակցելու հնարավորություն պետք է տրվի: Նախարարն ընդգծեց, որ երկքաղաքացիների թիվը աճում է աշխարհում, եւ հարցի կարետրությունից ելնելով Եվրախորհուրդը վերջին տարիներին մշակեց «Երկքաղաքացիության մասին» կոնվենցիան:

Բանավեճերով ի վերջո հաղթեց այն մոտեցումը, որ երկքաղաքացիները նույնպես պետք է մասնակցեն ընտրություններին, որովհետեւ հնարավոր չէ անտեսել եվրոպական երկրների շրջանակում գործող այն համաձայնագրերը, ըստ որոնց երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները չեն կարող ավելի սահմանափակ լինել, քան տվյալ երկրում ապրող անձանց իրավունքները: Այնուամենայնիվ, ընտրական օրենսգրքում եղած բոլոր այն հոդվածները, որոնք կապված են արտասահմանում ընտրություններ կազմակերպելու հետ, հանվեցին, եւ ամրագրվեց հետեւյալը. «Հայաստանի Հանրապետությունում ընտրություններն անցկացվում են միայն ՀՀ տարածքում»:

«Համընդհանուր ընտրական իրավունքի սահմանումը ներառում է տվյալ ընտրական իրավունքի համար անհրաժեշտ մեխանիզմների սահմանումը: Եթե կա իրավունք, բայց չես կարող իրականացնել, դեռեւս հին Հռոմում դրան անվանում էին «մերկ իրավունք»: Քաղաքացիների մի մեծ խմբի համար այս ընտրական իրավունքի սահմանումը դարձավ «մերկ իրավունք», քանի որ նրանց տվեց ընտրելու իրավունք, բայց պայմանով, որ խվեարկելու համար պետք է գան Հայաստան: Այսինքն՝ իրավունքը կա, բայց դրա իրականացման մեխանիզմները բացակայում են», բացատրում է իրավական համակարգի ամրապնդման խորհրդատվության ծրագրի իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու Հրայր Թովմասյանը:

Վերջինիս կարծիքով, ոչ պատշաճ մեխանիզմների առկայությունը սահմանադրորեն ամրագրված ընտրական իրավունքի սահմանափակում է ընթացակարգերի առումով, քանի որ ընտրելու ցանկություն ունեցող քաղաքացուն հարկադրում են՝

1. պետք է գաս Հայաստան ու այստեղ, եթե ունես մշտական հաշվառում, կխվեարկես,

2. ՀՀ այն քաղաքացիները, որոնք բնակվում են այլ երկրում եւ Հայաստանում չունեն մշտական հաշվառում, դարձյալ չեն կարող մասնակցել խվեարկությանը, որովհետեւ ընտրողների ցուցակները կազմվում են ըստ հաշվառման հասցեների: Իսկ եթե նա հաշվառման հասցե չունի, չի կարող ընդգրկվել ընտրացուցակում:

Երկրորդ խմբի մեջ մտնող քաղաքացիները բավականին մեծ թիվ են կազմում, պարզվում է, որ քաղաքացիների այս խումբը ընդհանրապես չի կարող մասնակցել ընտրությանը: «Մենք ցանկանում էինք մի խնդիր լուծել, որը կապված էր այլ երկրների քաղաքացիներին Հայաստանի ներքին կյանքին միջամտելը բացառելու հետ, բայց ստացվեց, որ ձեռքի հետ մեր քաղաքացիներին փաստացի զրկեցինք ընտրելու իրավունքից», նշեց Հ. Թովմասյանը:

Պրն Թովմասյանի դիտարկումով, ԵՕ-ում կատարված փոփոխություններն ընդունվեցին ի հակակշիռ «Երկքաղաքացիության մասին» օրենքի եւ այն մարդկանց համար, որոնք երկքաղաքացի են: Դավիթ Հարությունյանը նախագիծը քննարկելու ժամանակ խորհրդարանականներին հիշեցրեց, որ 1995 թ.-ից հետո մենք ունենք օրինապահ քաղաքացիներ, ովքեր ապրելով արտերկրում հարգեցին ՀՀ օրենսդրությունն ու հրաժարվեցին ՀՀ քաղաքացիությունից, եւ ունենք քաղաքացիների մի սվար զանգված, որոնք նախընտրեցին դուրս չգալ քաղաքացիությունից ու միաժամանակ ստացան այլ երկրի քաղաքացիություն: Եվ քանի որ այդ երկրորդ՝ ոչ օրինապահ զանգվածը պահպանելու է ՀՀ երկրի քաղաքացիությունը, որովհետեւ նրանք զրկված չեն, եւ սահմանադրությունն արգելում է այլեւս նրանց զրկել քաղաքացիությունից, ստացվում է, որ մենք օրինապահներին ավելի վատ պայմանների մեջ ենք դնում: «Արդարությունը պահանջում է, որ այն անձինք, ովքեր եղել են օրինապահ, չտեսք է ավելի վատ պայմաններում հայտնվեն, քան շատ ավելի սվար զանգվածը, որ օրինապահ չի եղել: Խոսքը վերաբերում է 100 թիվը չգերազանցող անձանց, արժե՞, արդյոք, շահարկումներից խուսափելու համար հրաժարվել դրանից», Աժ ամբիոնից հարց տվեց նախարարը:

Այնուամենայնիվ, պրն Թովմասյանի ասելով, անգամ այս օրենսդրական փոփոխությունների պայմաններում հնարավոր էր արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիներին մասնակից դարձնել մայիսի 12-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին՝ ՀՀ դեսպանատներում ընտրական տեղամասեր բացելով: «Չէ՞ որ օրենսգիրքն ասում է՝ պետք է ընտրությունները կազմակերպել ՀՀ տարածքում, իսկ միջազգային իրավունքում ամրագրված է, որ օտարերկրյա դիվանագիտական, հյուպատոսական ներկայացուցչություններն այլ պետության տարածք են համարվում: Այսինքն՝ ՀՀ դեսպանատները համարվում են ՀՀ-ի տարածք, ուստի այդ տրամաբանությամբ պետք է այնտեղ տեղամասեր բացվեին, եւ առնվազն այդ շենքում աշխատողները պետք է քվեարկեին»:

ԱԳՆ մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանը մեր հարցմանն ի պատասխան հայտնեց, որ արտերկրում գտնվող մեր դիվանագիտական ներկայացուցիչները նույնպես չեն քվեարկել խորհրդարանական ընտրությունների ժամանակ նույն հիմնավորումով, որ ընտրությունները կազմակերպվում են միայն ՀՀ տարածքում:

Հրայր Թովմասյանը ներկայացրեց արտասահմանում կիրառվող փորձը, երբ այլ երկրների տարածքներում ընտրական տեղամասեր չեն բացվում, ազգաբնակչությանը քվեարկությանը մասնակից դարձնելու այլ մեխանիզմներ են կիրառվում.

ա) լիազորագրով քվեարկել, երբ մեկին լիազորում են իր փոխարեն քվեարկելու,

բ) փոստով քվեարկել՝ նախապես դիմում եւ ստանում են քվեաթերթիկն ու ծրարով ուղարկում,

գ) էլեկտրոնային փոստի միջոցով են քվեարկում, որն ավելի հազվադեպ կիրառվող տարբերակ է:

«Միայն այդ դեպքում կարելի է ասել, որ համընդհանուր քվեարկության իրավունքը սահմանված է», շեշտեց պրն Թովմասյանը:

Հետեւելով նախորդ հանրապետական նշանակության ընտրություններին մասնակցած արտերկրի հայության թվաքանակին (ամենաշատ մասնակցություն գրանցվել է 2005 թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրության հանրաքվեին, որին, ըստ ԿԸՀ-ի, արտերկրում մասնակցել է 25.993 մարդ), անտրամաբանական են դառնում պատգամավորների այն մտահոգությունները, որ երկքաղաքացիներին ընտրական իրավունքից զրկելով, իրենք ազգային անվտանգության խնդիր են լուծում՝ բացառելով այլ երկրների քաղաքացիների միջոցով մեր երկրի ներքին կյանքին միջամտելը:

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

www.hetq.am

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Որքանո՞վ են ազատ լրագրողն ու լրատվամիջոցը Հայաստանում

Լրագրողները, ովքեր իրենց նկուն ուսերին գտնե տեսականորեն վերցրել են ժողովրդավարության, օրենքի եւ օրինականության երկիր զարգացնելու բեռը, իրենք երբեւէ չեն դիմում օրենքի օգնությանը, երբ դրա կարիքն ունեն: Իրենց համար հաց ու ջուր տեղեկատվությունը նրանք հաճախ հայթայթում են մեծ դժվարությամբ, երբեմն էլ բախվում անհաղթահարելի պատի՝ չկարողանալով լուծել նախատեսած խնդիրը: Հայաստանի մեդիադաշտի իրավունքների ու պարտավորությունների դաշտը կարգավորում է Հայաստանի սահմանադրությունը (հոդված 27), երաշխավորելով լրագրողի ու լրատվության՝ խոսքի ու տեղեկատվության ազատությունը, որը, սակայն գործնականում չի կիրառվում: Սահմանադրությունը հատուկ կետով առանձնացնում է բնապահպանական տեղեկատվությունը (նկատի առնելով երկրի՝ Օրհուսի կոնվենցիայի անդամ լինելը), որ եթե պաշտոնյան բնապահպանական տեղեկությունը թաքցնում է, ենթակա է պատասխանատվության:

2003 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունվեց զանգվածային լրատվության, սեպտեմբերի 23-ին՝ տեղեկատվության ազատության օրենքը: Սակայն եթե լրագրողներին մերժում են, նրանցից շատ քչերն են հրում անում օրենսդրությանը, հասկացնելու տվյալ պաշտոնյային, որ նա խախտում է Ե՛ւ ՁԼՄ, Ե՛ւ տեղեկատվության ազատության օրենքները: Առավել եւ շատ քիչ լրագրողներ են փորձում աշխատել գրավոր տարբերակով, իսկ գրավոր հարցում ներկայացնելը նրանց ավելի պաշտպանված կդարձներ:

«Այնուամենայնիվ, լրագրողներին տեղեկություն տրամադրելու առումով առաջընթաց կա, ասում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը, մանավանդ երբ համեմատում ենք 2002-2003 թվականների հետ, երբ օրենքը դեռ ընդունված չէր: Հիմա ավելի շատ պաշտոնյաներ են տեղյակ օրենքի եւ իրենց պարտավորությունների մասին: Եթե մերժում էլ են, ապա շատ զգուշորեն կամ մերժելիս փորձում են հիմնավորել: Շատերն արդեն գիտեն, որ լրագրողին ինֆորմացիա տրամադրելն իրենց օրենքով պարտավորությունն է, ոչ թե ցանկությունը»:

Հակառակ դեպքում մեր պաշտոնյաներին դատական պատասխանատվություն է սպասում: Դատարանը նրանց կարող է պարտավորեցնել տրամադրել տեղեկությունը, փոխհատուցել լրատվամիջոցի դատական ծախսերը՝ Ե՛ւ պետական տուրքը, Ե՛ւ փաստաբանի ծառայության վճարը: Հաջողը քրեական կամ վարչական պատասխանատվությունն է՝ տուգանք նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչեւ հիսնապատիկի չափով, իսկ եթե դա կրկնվում է 1 տարվա ընթացքում, տուգանքը հասնում է հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի: Բայց լրատվամիջոցներն առայժմ ձեռնպահ են մնում նման հայցերից:

Օրենսդրությունը բավական խիստ է քրեական պատասխանատվության ոլորտում՝ նախատեսվում է տուգանք նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից մինչեւ 400-ապատիկի չափով: Իսկ 104 հոդվածի համաձայն, լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու դեպքում տուգանքների հետ նախատեսվում են նաեւ ուղղիչ աշխատանքներ առավելագույնը 2 տարի ժամկետով եւ ազատազրկում՝ առավելագույնը 3 տարի ժամկետով: Հայաստանում հատկապես քրեական օրենսգրքի այդ դրույթը, որը 2003 թվականից ուժի մեջ է, մինչ օրս չի կիրառվել լրագրողների կողմից:

Փաստացի, օրենքները լրագրողներին մեծ հնարավորություններ են ընձեռում, եւ եթե նրանք փորձեն աշխատել դրանցով, հուսալիորեն պաշտպանված կլինեն: Օրենքը հիմնականում հանձնարարում է տեղեկատվության գրավոր տարբերակը, եւ նշում, որ այն կարող է տրամադրվել մինչեւ 5 օրվա ընթացքում: Եթե այդ ժամկետում էլ տեղեկատվություն չտրվի, այն ժամանակ միայն լրագրողը կարող է դատի տալ պաշտոնյային: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նույնիսկ գրավոր հարցումների կաղապար է մշակել, ըստ որի պաշտոնյան պարտավոր է հիմնավորել իր մերժումը՝ օրենքի համապատասխան դրույթին հղում կատարելով:

Օրենսդրությունը, բնականաբար, կարգավորում է նաեւ լրագրողի ու խմբագրությունների հարաբերությունները իրավական մարմինների եւ դատարանների հետ: Օրենքի բացը լրագրողի համար քրեական պատասխանատվություն նախատեսող քր. օրենսգրքի 318 հոդվածն է «Զրպարտության մասին», եթե լրագրողը զրպարտել կամ վիրավորանք է հասցրել պաշտոնյային, վիրավորել նրա արժանապատվությունը: Լրագրողական հասարակական մի շարք կազմակերպություններ օրենքի նախագիծ են մշակել, որով առաջարկում են չեղյալ հայտարարել պաշտոնյային վիրավորելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող այդ հոդվածը: Թերեւս դրա արդյունքում 2004-ի հունիսին օրենքում փոփոխություն կատարվեց, մեղմացվեց 2 տարի ազատազրկման չափը: Հայաստանում լրագրողի դեմ քրեական գործ հարուցելու դիմումներ եղել են, պարզապես դատախազությունը դեռեւս մերժում է դրանք հիմքերի բացակայության պատճառով: Օրենքի այս դրույթը որքեւէ լրագրողի հանդեպ գործնականում չի կիրառվել, եթե չհաշվենք 1999 թվականին «Օրագիր» թերթի խմբագիր Նիկոլ Փաշինյանի դեմ՝ նախկին քրեական օրենսգրքի 132 հոդվածը, բայց հետո նա պայմանական ազատ արձակվեց:

Մեզ մոտ պարզապես վախ կա, որ այն ամեն պահ կարող է օգտագործվել հատկապես ընտրությունների ժամանակ: Սակայն այս ընտրությունները եւ այս առումով բավական հանդարտ էին:

Այնուամենայնիվ, անկախ մահակի դեր կատարող այս օրենքի առկայությունից, մամուլը շատ դեպքերում իսկապես անպատասխանատու վարքագիծ է դրսեւորում: Ժամանակ առ ժամանակ նույնիսկ ամենաբարձր պաշտոնյաների վերաբերյալ թերթերում հայտնվում են վիրավորական դարձվածներ, սյուժեներ, որոնք ներխուժում են նրանց կյանքի անթույլատրելի տարածքներ, բայց պաշտոնյաներից ոչ ոք զարմանալիորեն դատարան չի դիմում: Նրանք կամ լուռ չեն վերաբերվում նման փաստերին, կամ խուսափում են, մտածելով, որ աղմուկ բարձրացնելու դեպքում բոլորը կիմանան, եթե մինչեւ հիմա ընդամենը քչերը գիտեին: Մի խոսքով, Ե՛ւ լրագրողները (ավելորդ ժամանակ չվատնելու եւ գլխացավանքի մեջ չընկնելու համար), Ե՛ւ պաշտոնյաները, հանգամանքների թելադրանքով, հանդուրժողական վարքագիծ են դրսեւորում միմյանց նկատմամբ:

Ընտրությունների շեմին մի շարք ՁԼՄ-ներ ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, թերեւ նախընտրական ու ընտրական շրջանում նման երեւույթները կանխարգելելու նպատակով ընդունեցին էթիկայի կանոնագիր լրագրողի անկողմնակալ կեցվածք ու լրատվության օբյեկտիվություն ապահովելու վերաբերյալ: Թերեւս սա նմանօրինակ խնդիրների լուծման ամենախելամիտ տարբերակն է, որը, սակայն, նորություն լինելով, էական ներգործության ուժ չունեցավ:

Այս տարի լրագրողների հանդեպ բռնությունների, սահմանափակումների դեպքեր եւս չեն եղել: Նման իրողություններ վերջին անգամ արձանագրվել են սահմանադրական հանրաքվեի ժամանակ, այսինքն, Հայաստանում որպես կանոն, այդ հարցը սրվում է քաղաքական կարետր իրադարձությունների ու քաղաքական շարժառիթների դեպքում: Այդպիսին էին Ե՛ւ անցած տարի «Ժամանակ երեւան»-ի խմբագիր Արման Բաբաջանյանին բանակից խուսափելու եւ փաստաթղթեր կեղծելու մեղադրանքով 4 տարի ազատազրկման դատապարտելու, Ե՛ւ «Իրավունքի» լրագրողին ու «Առավոտ»-ի արտահասիֆային թղթակցին ծեծելու փաստերը:

ԳԱՐԵՆ ՂԱՆԴԱՐՅԱՆ

Ադրբեջանը թված ունի խոսքի ազատության եվրոչափանիշների վրա

Ադրբեջանական «Ռեալնի Ազերբայջան» եւ «Գյունդելիկ Ազերբայջան» թերթերի խմբագրությունները (որոնք դադարեցրել են աշխատանքը որպես բողոք) փակելը, խուզարկությունները ու խմբագիրներից մեկին դատապարտելը ավելի քան երկու տարվա ազատազրկման խոսում է Ադրբեջանում ժողովրդավարության վիճակի մասին: Եվ դա տեղի է ունենում Ադրբեջանի մասին Եվրոպայի խորհրդի բացասական զեկույցից հետո: Իհարկե, երկրում մամուլի հետ կապված իրավիճակը չի կարելի համարել բավարար:

BBC-ի ադրբեջանական ծառայությանը տված հարցազրույցում այս մասին հայտարարել է ԵԽԽՎ Ադրբեջանի մասին զեկուցող Անդրես Խերկելը՝ խոսելով ադրբեջանական լրատվական դաշտի եւ երկրում խոսքի ազատության մասին:

Հետաքրքրական է, որ ԵԽԽՎ զեկուցողի կարծիքով, իրավիճակի նման վատթարացումը սպասելի չէր, քանի որ անգամ Բելառուսում են հետեւել Եվրոպայի խորհրդի ճնշադատությանը: «Սակայն Ադրբեջանի իշխանությունները ցուցադրաբար հասկացնում են, որ իրենք թված ունեն ճնշադատության վրա: Մասնավորապես, հարց էր դրվել փոխել զորարշության համար քրեական պատժի սահմանումը հանելու, քաղաքացիական ազատ արձակման եւ հեռատեսալիքների իրական անկախության առնչությամբ: Բայց այս բոլոր առաջարկությունները մնացին օդում կախված», նշել է Խերկելը:

Եվրոպացի դիվանագետի կարծիքով, հարկ է առանձին զեկույց պատրաստել «Ռեալնի Ազերբայջան» թերթի իրավիճակի կապակցությամբ: Ամեն դեպքում, խնդիրն այն է, որ արտաքին ազդեցությամբ երկրում ներքին իրավիճակի փոփոխությունն անհնար է, բայց, ի վերջո, Ադրբեջանի հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքը կլինի կտրուկ բացասական, ինչը մեծ վնաս կտա երկրի իմիջին:

Մտահոգության հերթական հայտարարությունն է արել նաեւ Ադրբեջանում ԵԱՀԿ գրասենյակի ղեկավար Խոսե-Լուիս Հերերոն: Հերերոն հիշեցրել է ԵԱՀԿ խոսքի ազատության գրասենյակի ղեկավար Միկլոշ Հարաշտիի հայտարարությունը՝ մտահոգություն արտահայտելով Ադրբեջանում լրատվամիջոցների դեմ բռնությունների առնչությամբ:

Այս ամենի համատեքստում, բնականաբար, սովորական կարելի է համարել ադրբեջանական իշխանությունների «աչքակապությունը»: Մասնավորապես, Ադրբեջանի նախագահի գրասենյակը, ադրբեջանական կայքէջերի փոխանցմամբ, ամենայն հանգստությամբ ու շատ այլ հարցերում էլ դրսեւորվող անամոթությամբ հայտարարում է, թե երկրում կա խոսքի ազատություն, լրատվամիջոցներն էլ կարող են հանգիստ աղահովել սեփական գործունեությունը:

Իսկ առավել խորհրդանշական կարելի է համարել այն հանգամանքը, որ օրերս Բաքվում անց է կացվում «Ժողովրդավարությունը անցումային հասարակություններում» թեմատիկայով միջազգային կոնֆերանս, որտեղ, թերեւ, խոսքի ազատության կարեւորությունը վերջին տեղերում չոտեսք է լինի: Մյուս կողմից, կարելի է տրամաբանական համարել ադրբեջանական իշխանությունների կեցվածքը լրատվամիջոցների հանդեպ: Երբ ընդդիմադիր լինելու հավակնոտ թերթերն անգամ փակվում են, ուրեմն կարելի է սպասել ինչ-որ յուրօրինակ իրադարձությունների, որոնք արտաքին աշխարհին «պիտի ներկայացվեն» ոչ այնպես, ինչպես կլինեն, այլ ինչպես հարմար կգտնի ղազախստանյան հավակնությունների նման որակներ, այն է՝ ցմահ նախագահելու մտադրություն դրսեւորելու հակված Իլհամ Ալիեւը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կոնգրեսն արգելեց «գազային OPEC»-ի ստեղծումը

ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատը հավանություն է տվել այն օրինագծին, որն օտար պետություններին արգելում է միջազգային նավթային ու գազային կառույցներ ստեղծել ներկայումս գործող OPEC-ի օրինակով:

Օրինագիծն ընդունվել է 345 կողմ, 72 դեմ ձայներով: Ասուրիթեթ պրես գործակալությունը հաղորդում է, որ համանման օրինագիծ է քննարկվում Կոնգրեսի վերին պալատում: Ավելի վաղ սենատի իրավաբանական կոմիտեն հավանություն է տվել օրինագծին:

Նավթային ու գազային միջպետական նոր կառույցների ստեղծումն արգելելուց բացի, օրինագիծն ԱՄՆ իշխանություններին թույլատրում է դատական հետաքննություններ ենթարկել ստեղծման փորձ անող օտար պետությունների կառավարություններին:

Սպիտակ տան վարչակազմում հայտարարել են, որ եթե խորհրդարանի վերին պալատը հավանություն տա օրինագծին, ապա նախագահ Ջորջ Բուշը վետո կդնի դրա վրա: Վարչակազմը երկյուղներ ունի, որ նավթ եւ գազ արտադրող երկրները կարող են ԱՄՆ-ի նկատմամբ դիմել պատասխան միջոցների, որոնք կհանգեցնեն նավթի ու գազի մատակարարման ընդհատումների:

Ամերիկացիներին մտահոգում է այն հանգամանքը, որ մի շարք պետություններ մտադիր են ստեղծել այսպես կոչված «գազային OPEC», որի մեջ կարող են մտնել Ռուսաստանը, Իրանը, Քաթարը, Ալժիրը եւ բնական գազ արտահանող մյուս մեծ երկրները:

Ռուսական գնացքներում կլինեն տղամարդկանց եւ կանանց խցիկներ

Ռուսաստանի գնացքների ուղեւորները հուլիսի 1-ից կարող են ընտրել, թե իրենք ինչպիսի խցիկում են ուզում ճանապարհորդել՝ տղամարդկանց, կանանց, թե խառը:

«Ռուսական երկաթուղիներ» ընկերությունը հաղորդում է, որ սպասարկման այդ ձեւը մտցվում է հեռավոր չվերթի բոլոր գնացքներում, իսկ ուղեւորների տեղաբաշխման հետ կապված բոլոր ծախսերը իր վրա է վերցնում ընկերությունը: Ընդսմին, տոմսերի գները չեն փոխվում:

Ենթադրվում է, որ խցիկի տեսակը կնշվի տոմսի համապատասխան սյունակում: Գնացքներում նման տարբերակում չի լինի, քանի որ կառուցվածքով բոլոր խցիկները միատեսակ են լինելու:

BBC-ն հաղորդում է, որ արդեն հունվարի 15-ից ռուսական ընկերությունը փորձնական կարգով նման խցիկներ է օգտագործել մի քանի չվերթերում: Ենթադրվում է, որ նոր նախաձեռնությունը կարժանանա ուղեւորների հավանությանը:

Հետխորհրդային տարածքում ուղեւորների նմանօրինակ տարանջատման փորձը հաջողությամբ կիրառվել է միայն Ուկրաինայում: «Խարկով-Կիեւ» գնացքի համար 7 վագոնը բաժանված է տղամարդկանց ու կանանց խցիկների, եւ այդ վագոնի տոմսերը մշտապես մեծ պահանջարկ ունեն:

Ռուսաստանում տվյալ ասպարեզում առաջամարտիկ է Գորկու մարզը, որտեղ սկսված փորձը տեւեց գրեթե մեկ տարի, դրական արձագանք գտավ, բայց ի վերջո դադարեցվեց: Նոր ձեռնարկումն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է այն կիրառել Ռուսաստանի ամբողջ տարածքում եւ պահանջարկից ելնելով փոփոխություններ կատարել շարժակազմերում: Կույբիշեւի երկաթուղու գնացքներում 2006 թ. ամռանը «Ժիգուլի», «Մորդովիա», «Բաշկիրիա» ֆիրմային գնացքներում անցկացված հետազոտությունները վկայում են, որ ուղեւորների 51 տոկոսը կազմում են կանայք, 49 տոկոսը՝ տղամարդիկ:

Սակայն Բելառուսի երկաթուղու ուղեւորների սպասարկման բաժնի պետ Անդրեյ Կաշկոն ՌԻԱ գործակալության թղթակցին հայտնել է, որ «Մոսկվա-Մինսկ» գնացքում ուղեւորների 85 տոկոսը կազմում են տղամարդիկ, 15 տոկոսը՝ կանայք: Ըստ այդմ պահանջվում է հաշվի առնել տեղական առանձնահատկությունները:

Ներկայումս հասարակական տրանսպորտում ըստ սեռերի բաժանումը գործում է Հունգարիայում, Բուլղարիայում, Մալայզիայում, Մեխիկայում, Ճապոնիայում, ինչպես նաեւ մահմեդական մի շարք երկրներում:

Պ. Ք.

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Լիբանանը կստանա ռազմական օգնություն արտահերթ

Պաղեստինցի գաղթականների զանգվածային տեղաշարժեր

Կիրակի օրվանից Լիբանանում պաղեստինյան «Իսլամական Ֆաթհ» արմատական խմբավորման գրոհայիններն եւ լիբանանյան բանակի միջեւ սկսված բախումները եւ ներքին անկայունությանն սպառնացող վտանգը վարչապետ Ֆուադ Սինիորային սպիտեցին ռազմական օգնություն խնդրել ԱՄՆ-ից: Ֆրանսպրեսը հաղորդում էր, որ երեքշաբթի երեկոյան նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը խոստացել է 30 մլն դոլարի արտահերթ ռազմական օգնություն հատկացնել Սինիորայի կառավարությանը:

Միաժամանակ հաղորդվում է, որ կարճատեւ հրադադարից օգտվելով՝ պաղեստինցի գաղթականների բեռների առաջին խմբաքանակը հասցվել է «Նահր էլ Բալեդ» ճամբար: Բայց գնդակոծության հետեւանքով զոհվել են երկու խաղաղ պաղեստինցիներ: ՄԱԿ-ի աշխատակիցները պատրաստվում են «Բադդուի» ճամբարում տեղավորել այնտեղ սպասվող մոտ 10 հազար նորեկներին:

Ասուրիթեթ պրես գործակալության տվյալներով, զինված բախումների ասպարեզ դարձած «Նահր էլ Բալեդում» միայն կիրակի օրն սպանվել են հինգ տասնյակ գրոհայիններ: Խաղաղ բնակչության զոհերի թիվն առայժմ անհնար է ճշտել:

Պաղեստինցիների հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Լիբանանի իշխանությունները եւ բանակը արդեն գրեթե 40 տարի մուտք չունեն պաղեստինցի գաղթականների ճամբարներ:

Լիբանանում ապրող 400 հազար պաղեստինցիներից 215 հազարը բնակվում է ճամբարներում, որտեղ պարբերաբար տեղի են ունենում զանազան խմբավորումների զինված բախումներ: Լիբանանի կառավարությունը երեքշաբթի օրը բանակին կարգադրել է գլխովին ոչնչացնել «Նահր էլ Բալեդում» հաստատված գրոհայիններին:

«Ազգ» արդեն գրել է, որ բանակի եւ պաղեստինցի արմատականների զինված բախումներն սկսվել են կիրակի օրը Տրիպոլիում մի խուզարկության ժամանակ, որի պատճառը նախօրեին պաղեստինցի գրոհայիններ իրականացրած բանկային կողոպուտն էր:

«Նահր էլ Բարեդ» ճամբարի բնակիչներն սկսել են զանգվածաբար շարժվել դեպի մոտերքում գտնվող «Բադդուի» ճամբար: Այդ մասին Ֆրանսպրեսի թղթակցին հայտնել է Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբբասի «Ֆաթհ» շարժման առաջնորդներից մեկը:

«Նահր էլ Բալեդի» բնակչության թիվն անցնում է 30 հազարից, իսկ «Բադդուի» ճամբարում 16 հազար գաղթական է ապրում: Նշվում է, որ առաջին ճամբարի հազարավոր բնակիչներ արդեն տեղափոխվել են «Բադդուի»: «Նահր էլ Բալեդում» մարդիկ հայտնվել էին բանակի ռմբակոծումների եւ «Իսլամական Ֆաթհի» արկերի ու հակատանկային հրթիռների խաչաձեւ կրակի տակ:

Բացի ռազմական օգնությունից, Լիբանանն սկսել է ստանալ նաեւ ՄԱԿ-ի մարդասիրական օգնության բեռներ: Երեքշաբթի հետմիջօրեին

Ավստրիան կարող է քրեական գործ հարուցել Կրեմլի մի շարք պաշտոնյաների դեմ

Ավստրիայի ոստիկանությունը պատրաստ է քրեական գործ հարուցել, որտեղ կնշվեն Կրեմլի վարչակազմի մի շարք խոշոր պաշտոնյաներ: Այս պնդումն է արվում «Նյու թայմս» հանդեսի «Պաշտոնյաները փողերը տանում են Արեւմուտք» հոդվածում: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Ավստրիա կատարած այցին համընկնող այս հրապարակման մեջ վկայակոչվում են ՌԴ ներքին գործերի նախարարության տնտեսական անվտանգության վարչության տվյալներ: Կասկածյալների թվում են Կրեմլի վարչակազմի ներկայացուցիչներ Իգոր Սեչինը, Յուրի Կովալչուկը, Վիկտոր Իվանովը:

«Էխո Մոսկվի» ռադիոկայանը նշում է, որ խոսքը միլիարդավոր դոլարների մասին է: Ընդսմին հիշյալ հանդեսը գրում է, որ ՌԴ ԿԲ նախկին փոխնախագահ Անդրեյ Կոզլովի սպանությունը նույնպես կապված է այդ մեղեղայությունների հետ: «Նյու թայմսի» տվյալների համաձայն, Կոզլովն իմացել է այդ գործարքների մասին եւ հենց այդ պատճառով էլ սպանվել է:

Հրապարակման մեջ նշվում է, որ օրերս ՌԴ գլխավոր դատախազությունը որոշել է փակել կամ որպես «աննշան» գործ դուրս գրել ՆԳՆ հարուցած թիվ 248089 քրեական գործը, որը վերաբերում է ռուսաստանցի խոշոր պաշտոնյաների փողերի դուրս բերմանը: Ընդսմին տվյալ «աննշան» գործում խոսքը միլիարդավոր դոլարների մասին է: Այդ գործում, ի թիվս այլ բանկերի, նշվում են ռուսական 10 խոշորագույն բանկերից 5-ի, ինչպես նաեւ ավստրիական «Ռայֆայզեն» բանկի անունները:

Խոշոր պաշտոնյաների փողերի զանգվածային արտահոսքը սկսվել է դեռ 2001-2002 թթ.՝ նավթի կտրուկ թանկացման հետ միաժամանակ: Բայց նախկինում դա երբեք նման կենտրոնացված բնույթ չէր կրել. փողերը սովորաբար դուրս էին տանում զանազան առանձին խմբավորումներ: Մինչդեռ «Դիսկոնտ» բանկի եւ ավստրիական «Ռայֆազենի» հետ կապված սխեմայում ընդգրկված են փաստորեն բոլոր խոշոր բանկային կառույցները եւ պաշտոնյաների մոտավորապես միեւնույն շրջանակը:

«Դիսկոնտ» բանկի միջոցով փողերի դուրս բերումից բացի, կենտրոնացված ձեւով Ռուսաստանում իրականացվել է խոշոր գումարների կանխիկացում: Միայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում նման սխեմայով տարբեր բանկերում հնարավոր է եղել կանխիկացնել տասնյակ միլիոնավոր դոլարներ:

Պ. Ք.

Մշակույթ

Սարդարապատյան դյուցազնամարտ

Տարգելի ընթերցող, միասին վերհիշենք հայ ժողովրդի պատմության խաչագիտակ, ակադեմիկոս Ատոմ Հովհաննիսյանի բնութագրական խոսքերը. «Դժվար է վանել այն միտքը, որ Սարդարապատի շիկացած ավազուներում կատարված հերոսությունը հայ ժողովրդի նոր պատմության համար ավելի նշանակալից է եւ այժմեական, քան վերագրվում է նրա հին պատմության մեջ այն ողբերգությանը, որ կատարվել է Ավարայրի դաշտում, Տղմուտի ափին...»:

Այո, Սարդարապատի հերոսական իրողությունը ոչ միայն հայ ժողովրդի ինքնագիտակցության փորձաքաշը եղավ, այլեւ նրա գոյատեւության ապահով պատվանդանը...

Շատ է գրվել, թե ինչ է նշանակում հայոց նոր պատմության համար Սարդարապատը: Իսկ թե ինչ է եղել Սարդարապատը հատկապես ժողովրդի համար, երբ կշեռքի մի նժարին դրված էր նրա գոյությունը, իսկ մյուսին՝ ժողովրդասպան, ահեղ թշնամու բերած մահաբաս վնիռները, տեղեկացրեց մեզ Ռոբերտ Կարայանն իր «Փրկություն» գրքով: Ինքնին անհավանական է 1983 թ. գրի հրապարակման պատմությունը՝ խորհրդային տարիներին, երբ Սարդարապատի հերոսներից շատերը համարվում էին «հակա» եւ «ժողովրդի թշնամիներ», նույնիսկ այն ժամանակվա խաղաղական ղեկավարությունը գիտակցեց գրքի կարեւորությունը: Գիրքն ընթերցելիս ակամա զգում ես՝ հեղինակը եղել է բոլոր իրադարձությունների վկան ու ականատեսը, խանգի լինելով զուտ գեղարվեստական գործ, նույնքան ճշգրիտ է, կոնկրետ ու փաստագրական: Ասել, որ գիրքն արժանացավ լավ ընդունելության, նշանակում է ոչինչ չասել: «... Ոչ թե հրատարակվել, այլ լույս է տեսել լույսին արժանի գիրք... Եվ այն աշխարհը, որ կարելի է Սարդարապատյան կոչել, Ռոբերտ Կարայանը կերտել է ազատագրական շարժման ոսկուց», գրել է գրականագետ Վազգեն Մնացականյանը:

«... Ռոբերտ Կարայանի «Փրկություն» վեպը հայ գոյապայքարի գեղարվեստական փայլուն շողարձակումներից մեկն է, որի պատմական արժեքը դիմացել է ժամանակի փորձությանը եւ ազգությունը անկախության ու ազատագրության ոգեկոչող նշանավոր երկերի շարքում հաստատել է իր ուրույն տեղը... » (Սեւակ Արզումանյան, գրականագետ, հանրապետության ազգային ակադեմիայի ակադեմիկոս): «Հայրենաշունչ գրող Ռոբերտ Կարայանին՝ իմ գնահատանքը եւ օրհնությունը» (Վազգեն Առաջին կաթողիկոս): Այս ամենը Սարդարապատի մասին պատմող վեպի վերաբերյալ խանդավառ արձագանքների սոսկ մի մասն է:

Սարդարապատի փրկության ճակատամարտի հերոսների մասին է մեր զրույցը գրի հեղինակ Ռոբերտ Կարայանի հետ:

- Ռոբերտ Մուշեղի, Սարդարապատի մասին ձեր «Արեւը գեղեցիկ է մայրամուտին» եւ «Փրկություն» գրքերը բազմիցս հրատարակվել են, սակայն գրախանութներում հնարավոր չէ դրանք գտնել, վաճառվում են անմիջապես: Ասացեք, ի՞նչ է նշանակում Սարդարապատը ձեզ համար:

- Սարդարապատի ճակատամարտը ոչ միայն հայոց ոգու փորձություն էր, այլեւ նրա աղագայի հուսալի երաշխիքը:

- Մանավանդ, երբ ազգը գտնվում էր անդունդի եզրին...

- Թուրքերի մարդասպան-գաղափարն էր՝ ոչնչացնել հայ ժողովրդի վերջին բեկորներին իր հայրենիքի վերջին պատառ հողի վրա... Անտանելի դեմ պայքարելու պատվակով Մուսաֆա Քեմալը եւ Կարաբեքիր փաշան հեղափոխական Լենինից ոսկի ու զենք ստացան եւ Կարմիր ֆեսերը փոխելով կարմիրբանակայինի «կոմունարկայով»՝ թուրք հորդաները «ինտերնացիոնալի» հնչյունների տակ ներխուժեցին բզկտված, անօգնական «իմպերիալիստական Հայաստան»: Հիշենք, թե ինչ ասաց թուրք Վեհիք փաշան Հայաստանի ներկայացուցիչ Հովհաննես Քաջազնունուն. «Ճակատագիրը թուրքերին էռում է Արեւմուտքից՝ Արեւելք: Մենք հեռացանք Բալկաններից, կհեռանանք նաեւ Աֆրիկայից: Բայց մենք կտարածվենք դեպի Արեւելք: Այնտեղ մեր արյունն է, մեր կոնը, մեր լեզուն: Ամենուրեք մեր եղբայրներն են ու մեզ հարկավոր է դեպի նրանց տանող ճանապարհ: Դում պետք է հեռանաք այստեղից»: Եվ 1918 թ. մայիսի 21-ին թուրքական կանոնավոր բանակը հասավ գրեթե Երեւան... Թվում էր՝ չկար մի ուժ, որ ի զորու լիներ կանգնեցնել նրան...

- Բայց կանգնեցրին...

- Ինչպես միշտ, իր պատմության ամենաճակատագրական պահերին հայ ժողովուրդը ժողովեց իր վերջին ուժերը՝ հուսահատ գաղթականներ, մահապարտներ դարձած հոգեւորականներ, ֆիդայիների ջոկատներ ու կամավորներ, բոլորը՝ ովքեր կարող էին զենք վերցնել...

- Սակայն Սարդարապատի ճակատամարտում հերոսի փառքով պսակվեցին ոչ միայն հայերը: Եվ դա հոյակապ ցույց է տրված ձեր գրքում:

- Այո, իրոք, ոտքի ելավ Հայաստանի ողջ ժողովուրդը: Հիշենք Մելգուշի Ուսուբ բեյի գլխավորած եզդիական հեծյալներին, ռուս սպաներ Սիլինի ու Պերեկրեստովի ջոկատներին, հույն Սակելարիին, ֆրանսիացի Շնեուրի եւ ռուս Կլիչ հրետանավորներին, որոնք ուս ուսի մարտնչեցին Նազարբեկովի ու Սիլիկյանի, Դանիել ու Պավել Բեկ-Փիրումյանների հետ: Սարդարապատի ճակատամարտում կռվում էր ոչ միայն հայկական բանակը, այլեւ ողջ Հայաստան աշխարհը...

- Աներեւակայելի հերոսության յոթ օրե՞րը... Ու փառապանծ հաղթական ուժերի ապշեցուցիչ անհավասարության պայքարում... Սակայն պարզվեց, որ մարտադաշտում սոսկ միայն հերոսությունը բավական չէր...

- Ալեքսանդրապոլից Բաքում ձողորած Վեհիք փաշան խնդրում է թուրք պատվիրակության ղեկավար Խալիլ բեյին. «Ասա, ո՞ւր են հայ պատվիրակները: Վերջացնենք եւ հաշտություն կնքենք: Հերիֆները գեր կկռվեն: Բնավ պահեստի ուժ չունեմ: Թուրք ասկյարը եթե այսպես նահանջի, մեր շունչը Կոստանդնուպոլսի դռներուն կառնենք»:

Տպավոր, կարի բացակայության պատճառով հայ պատվիրակությունը ժամանակին չտեղեկացավ հաղթանակի մասին, եւ նենգ թուրքերին հաջողվեց իրենց պայմանները թելադրել: Եվ, այնուամենայնիվ, Սարդարապատի նշանակությունն անգնահատելի է: Քանզի այլապես խոսք չէր լինի այլեւս՝ ո՛չ հայերի, ո՛չ էլ Հայաստանի մասին:

- Մենք շատ չենք ունեցել փառահեղ հաղթանակներ, որ չհիշենք յուրաքանչյուր հաղթանակը: Սակայն Սարդարապատն, իրոք, առանձնանում է: Երեւի մեզ համար Մայիսն, իրոք, երջանիկ ամիս է, հիշենք Բեռլինը, Շուշին...

- Ռասի, երիցս սուրբ են Սարդարապատի հերոսները, որոնք դարձան մեր գալիք հաղթանակների ավետաբերները, ու մենք հավերժ երախտապարտ ենք հեռավոր 18 թվականի հերոսներին այն բանի համար, որ փրկեցին Հայաստանը ու հայ ժողովրդին, ոգեշնչեցին նորանոր սխրանքների:

ՆԵԼՍՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

<< գրողների միության անդամ

«Արվեստի մեջ կարեւոր է միտքը»

«Հակադրություն», «Եղեռն», «Վերածնունդ», «Գարուն»... ահա այսպիսի խորագրեր էին ընտրել ցուցահանդեսի պատանի մասնակիցները, որի բացումը տեղի ունեցավ Խնկո Ապոր անվան գրադարանում:

Գառնիի մանկական գեղագիտական դաստիարակության դպրոցի սաներն առաջին անգամ ներկայացան հասարակությանը:

«2 տարի է ինչ աշխատում էինք, բայց արդյունքը չէինք տեսնում: Վերջապես կազմակերպեցինք ցուցահանդես, որ շրջապատն էլ տեսնի, մենք էլ... », ասաց դպրոցի ուսուցչուհի Ռուզան Խալաթյանը: Գեղանկարչություն, գոբելեն, ասեղնագործություն, քանդակ, փորագրություն ներկայացված 20-ական աշխատանք: «Կարմիր ու սեւ, գույներ, որ միշտ կողք կողքի են ու միշտ իրար խանգարում են, ինչքան էլ որ պայքարի մեջ են այս 2 հակադրությունը, միեւնույն է, վերջում լինում է միշտ լավն ու բարին», ահա այսպես է բացատրում 14-ամյա Ռուբինա Պետրոսյանը իր «Հակադրություն» ստեղծագործությունը:

«Արվեստում շատ կարեւոր է միտքը: Եթե դիմացինիդ մտածել ես տալիս, ազդում ես իր վրա, կամ թեկուզ հուզում, ուրեմն այդ գործը ճիշտ է»,-ասաց Ռ. Խաչատրյանը:

Ցուցահանդեսի հանդիսավոր բացմանը ներկա էին արվեստագետներ, դերասաններ, որոնք իրենց հիացմունքն արտահայտեցին ստեղծագործությունների վերաբերյալ:

«Ես համոզված եմ, որ եթե համեմատելու լինենք ֆրանսիացի երեխաների գործերը այս գործերի հետ, երեւի այս աշխատանքները ավելի բարձր մակարդակի լինեն», ասաց գեղագիտական կենտրոնի գեղարվեստական ղեկավար Հասմիկ Հակոբյանը:

Պատկերելով Եղեռնը՝ մեկ այլ ստեղծագործող իր կտավն անվանել էր «Վերածնունդ»: «Եղեռնի թեմայով վերածնունդ եմ պատկերել: Մուգ գույների միջից կարծես լույս է ժայթքում, այստեղ ողբերգությունը փիչ է, իսկ թե ինչո՞ւ վերածնունդ, պարզապես չէի ուզում արյուն ներկայացնել», ասաց Նանե Վարդանյանը:

Հաջողություններ, իհարկե, կան, բայց, այնուամենայնիվ, անտարբերությունը ավելի շատ է: Այս երեխաները երկար են աշխատել ու սպասել այս ցուցահանդեսին, նրանց արդեն հնարավորություն է ընձեռվել ներկայացնել իրենց շնորհը:

ԼՈՒԻԶ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՅԱՐԵՆՑՅԱՆ ՕՐԵՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Բանաստեղծի դուստրը պատրաստվում է գիրք հրատարակել

Այս տարի լրացավ հայ մեծ բանաստեղծ Ե. Չարենցի ծննդյան 110-ամյակը: Այդ առթիվ գրականության ինստիտուտը, գրականության թանգարանն ու ԵՊՀ-ի բանասիրության ֆակուլտետը կազմակերպել են Չարենցյան ընթերցումներ:

Չարենցյան օրերը մեկնարկեցին մայիսի 23-ին: Այդ օրը ԵՊՀ-ի բանասիրության ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպեց եղիտ Չարենցի դուստրը՝ Անահիտ Չարենցը: Նա ուսանողներին ներկայացրեց իր եւ բանաստեղծ հոր կյանքի հայտնի եւ անհայտ դրվագներ:

ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը նշում է, որ սովետական բռնատեսությունը Չարենցին միայն ֆիզիկապես մեկուսացրեց: Ժողովրդի եւ գրականության կյանքից մեկուսացնել չկարողացավ:

«Չարենցը 20-րդ դարի հանճարներից մեկն է: Նրա կյանքը եղել է շատ բարդ՝ լի դեպքերով ու իրադարձություններով: Տպավոր, ես նրան չեմ հիշում: 2 տարեկան էի, երբ նա մահացավ: Այդ 40 տարվա ընթացքում նրա դեմ շատ մեղքեր են գործվել: Գուցե նմանատիպ միջոցառումների շնորհիվ հնարավոր լինի խավել այդ մեղքերն ու դաժանությունները»:

Չարենցյան օրերի ընթացքում նախատեսված են գիտական, մշակութային միջոցառումներ, գիտական զեկուցումներ ու ընթերցումներ:

Այս տարի Անահիտ Չարենցը կհրատարակի Չարենցի բանաստեղծությունների մի ժողովածու՝ «Վերջին խոսք» վերնագրով: Գրքում տեղ են գտել բանաստեղծի ստեղծագործական կյանքի վերջին շրջանի՝ 1934-1936 թթ. անտիպ ստեղծագործություններ, որոնք ընթերցողի եւ գրականագետների դատին է ներկայացվում առաջին անգամ:

«Այս գիրքը կարծես Չարենցի կյանքի վերջին մատյանը, վերջին խոսքը լինի: Այդ բանաստեղծությունները երկար տարիներ թաղված են եղել եւ շատ դժվար էր դրանք վերծանել»:

Անահիտ Չարենցը նշում է, որ հայ ժողովուրդը միշտ արտահայտել է սիրո եւ երախտագիտության անկեղծ զգացումը դեպի բանաստեղծը: Այսօր նա երջանիկ է, որ ժամանակակից երիտասարդ սերունդը մեծ հաճույքով է ընթերցում ու հարգանքով Չարենցով:

ՀԱՄԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսկական դեմոկրատիա

Սրամ Խաչատրյանի անվան Երեւանի օպերայի եւ բալետի թատրոնին հատող պատասխանատուի կողքով անցնելիս ակամա հասկանում ես մի պարզ ճշմարտություն. արվեստը տահմաններ ու սահմանումներ չի ճանաչում: Պարզ է դառնում նաեւ, որ նախկինում այս ամենի մասին քո պատկերացումները, որքան էլ քեզ համար տարօրինակ հնչի, եղել են բավական միամիտ ու մեղմ ասած՝ իրականությանը ոչ այնքան մոտ: Սա դեռ վերջը չէ. ավելի ուշադիր ու մանրակրկիտ ուսումնասիրելով պատասխանների յուրահատկությունն ու ծանոթանալով դրանց բովանդակությանը՝ վերջնականապես ինքդ քեզ համար կբացահայտես, որ արվեստից ու մշակույթից կամ լավ գլուխ չես հանում, կամ պարզապես հետ ես մնացել ժամանակից: Շատ բան անհրաժեշտ չէ՝ երեւակայություն+վերլուծություն=եզրակացություն:

Ժամանակի հրամայականն իր կնիքը դրել է ամեն ինչի վրա: Մեծապատասխան կոչերն ու հրավերները եւ դա են հատատում: Իսկապես, ինչ կա՞ որ, օրինակ, ազգային պատկերասրահում մեր ինքնությունը հերթական անգամ գիտակցելուց, ճշտելուց ու հաստատելուց հետո կարելի է վայելել նաեւ, ասենք, Պարսկաստանի շունչը. մեր հարեւանները մեզ մեծահոգաբար, սիրով առաջարկում են վայելել նարգիլե, պարսկական ուտեստների ընտրանի եւ այս ամենը պատասխանի՝ պարսկատան վերտառությամբ. ի լուր բոլորին՝ մենք բոլոր ժողովուրդների արժեքներն էլ հարգում ենք ու լիաթատասան պողպագանդում: Արվեստը հայրենիք չի ճանաչում. այս իրողությունն աչք է ծակում: Սա մենք չենք ասել, բայց հաստատում ենք: Իսկ մյուսները եւ կհասկանան արդյոք մեր այս ազգախառն արվեստը, թե՝ ոչ, իրենց խնդիրն է: Կարեւորը՝ մենք մեր կողմից մեր շնորհին ու մեծահոգությունն ենք ցույց տալիս: Մեր էությունն է այդպիսին (չէ՞ հավատում, բացեք պատմության դասագրքերը):

«Արշակ 2-րդ» օպերա, քաղաքի բարձրակարգ ժամանցային ակումբներ (նշված բարձրաճաշակ արվեստի կոթողներից հատկապես աչքի է ընկնում «Astral» ակումբը. արժանի լրացումն է մյուս ժամանցի վայրերի, որոնցից է օպերան: Եթե տմսեր չկան «Անուշը» դիտելու, սարսափելի չէ, բա էլ ո՞ր օրվա համար են ակումբները. ընտրեք՝ լրացնելով հոգեւոր սննդի պակասը), Շուման, «Գայանե» բալետ, Արման Հովհաննիսյան, կամերային երաժշտության գործիքներ, 8 կամ, ավելի ճիշտ, 7,5 ամենահոմոնրաստեղծ կոստյումավոր տղաները: Այս երախտավորների լուման հայ արվեստի կայացման ու զարգացման դժվարին ճանապարհին դժվար է թերագնահատել, հանցավոր չլինենք:

Աչք են շոյում ջութակահարների ու թավջութակահարների հանդիսատեսական յոթերորդ մրցույթի հրավերն ու անմիջապես նրա կողքին, որպես ամենատրամաբանական հաջորդականություն, անշարժ գույքի ցուցահանդես վաճառի հրավիրող բարձրագրագրոտ պատասխանները, եւ այս ամենը միայն բարձրաճաշակ արվեստը գնահատողների համար, հիրավի, ներդաշնակ համադրություն: Ինչպես ասել են մեր իմաստուն մեծերը, ճաշակին ընկեր չկա (մեր ճաշակն ուրիշ ճաշակներեն է.-Սայաթ-Նովա), մի խոսքով՝ մերն ուրիշ է:

Խիստ արվեստասեր դուրս եկանք, թող ամբողջ աշխարհն իմանա: Ազգովին տաղանդներ փնտրում եւ, որ ամենակարեւորն է (ես կասեի՝ ամենահետաքրքրական) գտնում ենք ամենուր, իրոք որ՝ ով փնտրում է նա գտնում է: Պետք է ասել, որ նույն այս հավերժական փնտրտուքի մեջ էլ գտել ենք շատ այլ նորանոր ու չտեսնված, չլսված բաներ: Հայտնաբերել ենք, օրինակ, գեղեցիկի հետ հաղորդակցվելու, գեղեցիկը ըմբռնելու այլ, անգամ կարելի է ասել՝ այլընտրանքային տարբերակներ. ընտրություն կա, եթե ձեզ, ասենք, այնքան էլ չի հետաքրքրում թավջութակի համար սոնատը, ցանկում հատուկ ընդգրկված է նաեւ Սոնա՝ գեղագիտական հաճույք անկողնում (պատասխանի՝ մեծ-մեծ տառերով՝ «Անկողնում Սոնայի հետ») երեւակայությունն ու ստեղծագործելու ցանկությունը եւ ունակությունն այստեղ անկասկած անասելի բարձունքների է հասնում, ահա թե ինչպիսին պետք է լինի իսկական մուսան: Արվեստի աշխարհում ոչինչ երբեք այսքան գայթակղիչ չի եղել: Գեղեցիկի հետ անմիջական ու սերտ շփումն է, որ կփրկի աշխարհը. ամեն կասկածից վեր է: Մնում է միայն ադրել ու վայելել: Սառը դահլիճներն ու մետրերով հեռու բեմն ադեն նորաձեւությունից դուրս են. հետո էլ կասենք՝ երիտասարդները արվեստով չեն հետաքրքրվում, ճիշտ չեն ընկալում: Պարզապես արվեստ էլ կա, արվեստ էլ: Մամուլի ամենաէլիտար ներկայացուցիչները այստեղ ուղղակի անփոխարինելի են. որքան մեծ պետք է լինի այսպիսի ամսագրերից մեկի, «El style»-ի սերը դեպի մեծ արվեստը, որպեսզի համապատասխան տպագրում բավական թանկ գնահատվող առաջին էջը տրամադրի այս նորարարության արտացոլմանն ու տարածմանը, ավելին՝ անմահացնի բոլոր նրանց համար, ովքեր միամիտ, անտարբեր անցնեն այս էլիտար ամսագրի կողքով ու չնկատեն այն. մեծ պատասխանը՝ ամսագրի լայնածավալ շաբաթվա ընթացքում ու ողջ երկայնքով-լայնքով պառկած ներշնչված օրիորդով (նույն ինքը՝ Սոնա) հանդերձ հատատ անկասկած չի մնում (չնայած սրան՝ յուրաքանչյուր իրեն հարգող քաղաքացի պետք է իմանա գտնե «El style»-ի վերջին նորությունները, սակայն բացառություններ, ինչպես գիտեք, միշտ էլ լինում են): Տանկացած նորարարություն, այն էլ այսպիսի ցնցող ու արժեքավոր, պետք է հասու լինի բոլորին, լուսավորենք ինքներս մեզ: Եվ վերջապես ինչպե՞ս կարելի է չտեղեկացվել նաեւ ասղային հարսանիքներից, նորաձեւության վերջին ճիչերից: Մնում է միայն իրազեկվել, ադրել ու վայելել: Բա՞, ինչպես կասեն մեր հոմորի դասականները՝ էս էլ ընենք:

Ասում եմ, էլի, բա մեզնից փախչենք, մեր դեմոկրատիայից էլ հո չենք փախչի:

ԱՐՈՒՍՅԱԿ ՊԱՊՅԱՆ

ՀՀ հավաքականը շկում է մրցաշարային վիճակը

Եկատերինբուրգում ընթացող շախմատի կանանց աշխարհի թիմային առաջնության մեկնարկային երկու անհաջող տուրերից հետո Հայաստանի հավաքականը վերջապես գտավ իր խաղը եւ պարզապես ջախջախեց չեխ շախմատիստուհիներին:

Ամենաերկարաեւը առաջին խաղատախտակի վրա հանդես եկող Էլինա Դանիելյանի մրցավեճն էր Յանա Յացկովայի հետ: Սպիտակներով հանդես եկող Դանիելյանը կարողացավ իրացնել առավելությունը եւ 75-րդ քայլին ստիպեց մրցակցուհուն անձնատուր լինել: Իսկ ահա Օլգա Սիկորովա-Լիլիթ Մկրտչյան մրցախաղում հաղթանակի հասնելու համար հայ շախմատիստուհուն անհրաժեշտ եղավ ընդամենը 32 քայլ: Հավաքականի առաջատարների հաղթարավը շարունակեցին նաեւ նրանց խաղընկերուհիները: Նելլի Աղինյանը սպիտակներով 43-րդ քայլում առավելության հասավ Պետրա Բլազկովայի նկատմամբ, իսկ Լիանա Աղաբեկյանը սեւերով պարտության մատնեց Կատերինա Նեմցովային: Վերջինս հանձնվեց 58-րդ քայլում:

4-րդ տուրում հայ շախմատիստուհիների մրցակիցը մրցաշարի բացահայտ հեռնարպահ Բոսվանայի հավաքականն էր, որը միեւնույն 0-4 հաշվով մինչ այդ պարտվել էր լեհերին, վրացիներին եւ ուկրաինացիներին: Ասի մեր հավաքականին

հիանալի հնարավորություն էր ընձեռվել շարունակել հաղթարավը եւ զգալիորեն բարելավել մրցաշարային իրավիճակը: Եվ մեր շախմատիստուհիները հիանալիորեն օգտագործեցին ընձեռված հնարավորությունը եւ կրկին հաղթեցին խոշոր՝ 4-0 հաշվով:

3-րդ տուրում իրենց հաղթարավը շարունակեցին Չինաստանի եւ Ուկրաինայի հավաքականները: Չին շախմատիստուհիները մրցում էին առաջատարներից մեկի՝ լեհերի հետ, որոնք եւ նախորդ երկու տուրերում հաղթանակներ էին տոնել: Ինչպես չափով անակնկալ էր գրանցված 4-0 հաշիվը: Չին շախմատիստուհիները բոլոր պարտիաներում էլ հաղթանակ տոնեցին: Ավելի դյուրին էր Ուկրաինայի հավաքականի խնդիրը, որը 4-0 հաշվով հաղթեց Բոսվանայի ընտրանուն եւ եւս վաստակեց 6 միավոր:

Ռուսաստանցի շախմատիստուհիները 3,5-0,5 հաշվով պարտության մատնեցին Վիետնամի հավաքականին: Միակ ոչ-ոին գրանցվեց Վրաստան-Գերմանիա մրցախաղում:

4-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր Չինաստանի եւ Վրաստանի հավաքականների մրցավեճը: Համառ պայքարում գրանցվեց ոչ-ոի՝ 2-2: Նույնպիսի հաշիվ գրանցվեց Գերմանիա-Ուկրաինա մրցախաղում: Ռուսաստանի հավաքականը 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց Լեհաստանի ընտրանուն, իսկ վիետնամցի շախմատիստուհիները 3-1 հաշվով առավելության հասան չեխերի նկատմամբ:

4 տուրից հետո մրցաշարային աղյուսակը 7-ական միավորով գլխավորում են Չինաստանի եւ Ուկրաինայի հավաքականները: Նրանցից մեկ միավորով հետ են մնում ռուսներն ու վրացիները: Հայաստանի հավաքականը, շնորհիվ վերջին երկու տուրերում տարած հաղթանակների, վաստակել է 4 միավոր: Նույնքան միավոր ունեն նաեւ Վիետնամի եւ Լեհաստանի հավաքականները: Գերմանացիների հաշվին գրանցված է 2 միավոր, իսկ ահա չեխերն ու Բոսվանայի հավաքականն առայժմ միավոր չունեն:

Ռոմարիոյի երազանքը վերջապես իրականացավ

Բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստ Ռոմարիոն վերջապես իրականացրեց վաղեմի երազանքը՝ խփելով ֆուտբոլային կարիերայում իր 1000-րդ գոլը: Դա տեղի ունեցավ Բրազիլիայի առաջնության 2-րդ տուրի «Վասկո դա Գամա»-«Սպորտինգ» հանդիպման ժամանակ: Առաջին խաղակեսում հարձակման գծում Ռոմարիոյի խաղընկեր Անդրե Դիասը երկու անգամ գրավեց մրցակցի դարպասը: Ռոմարիոն եւս կարող էր աչքի ընկնել: Խաղային դրվագներից մեկում նրա հարվածից հետո մրցակցի պաշտպան Դու Լոպեշին հաջողվեց գնդակը հեռացնել դասարկ դարպասից, իսկ երկրորդ դեպքում վերջին պահին պաշտպանները նրա ոտքերի մոտից հեռացրին գնդակը:

Ընդմիջումից հետո 48-րդ րոպեին «Սպորտինգի» պաշտպանը սեփական տուգանային հրապարակում ձեռքով խաղաց եւ մրցավարը 11մ հարված նշանակեց: 41-ամյա Ռոմարիոն մոտեցավ գնդակին եւ հսկայական իրացրեց 11մ հարվածը՝ խփելով 1000-րդ գոլը: Երբ գնդակը հայտնվեց դարպասում, անմիջապես խաղադաշտ ներխուժեցին ֆուտբոլիստի հարազատները, ընկերները, լրագրողներն ու ֆուտբոլասերները: Նրանց թվում էր նաեւ «Վասկո դա Գամայի» նախագահ Էուրիկո Միրանդան, որը Ռոմարիոյին նվիրեց 1000 թվանշանով մարզաշապիկը: Այնուհետեւ Ռոմարիոն պատվո շրջան կատարեց ֆոտոնկարիչների ուղեկցությամբ: Այս ամենը տեւեց 16 րոպե, որից հետո խաղը վերսկսվեց: Ճիշտ է, Ռոմարիոյին 15 րոպե անց փոխարինեցին: Իսկ խաղն ավարտվեց «Վասկո դա Գամայի» 3-1 հաշվով հաղթանակով:

Խաղից հետո Ռոմարիոն կրկին հայտնվեց բոլորի ուշադրության կենտրոնում: Նա խոստովանեց, որ իր խփած 1000 գոլերի մեջ, որի հաշվարկն ինքն է կատարել, ընդգրկված են նաեւ պատանեկան մրցումներում, ինչպես նաեւ ընկերական խաղերում եւ զանազան հոբելյանական մրցախաղերում խփած գնդակները: «1000-րդ գոլը նվիրում եմ ընտանիքիս եւ իմ երեխաներին: Սա մեծ պատիվ է նման բարձր ցուցանիշի հասնել: Դարպասպահ Մագրաոն, անկախ իր կամքից, իմ շնորհիվ մտավ պատմության մեջ»,- նշել է Ռոմարիոն:

Թիմի գլխավոր մարզիչ Սելսու Ռոսն էլ ուրախ էր այդ իրադարձության առիթով. «Ինձ համար մեծ պատիվ է աշխատել Ռոմարիոյի հետ: Ուրախ եմ այս նշանակալի իրադարձության մասնակիցը դառնալու: Այն իրոք բրազիլական եւ համաշխարհային ֆուտբոլի համար մեծ նշանակություն ունի»:

Նշենք, որ Ռոմարիոյի 1000-րդ գոլին ֆուտբոլասերները վերջին շրջանում երկար սպասեցին: Ռիո դե Ժանեյրոյի առաջնության ավարտական երեք տուրերում նրան չհաջողվեց գոլ խփել, իսկ հետո մինչեւ Բրազիլիայի առաջնության մեկնարկը մոտ մեկուկես ամիս ընդմիջում հայտարարվեց: Իրականացնելով երազանքը, Ռոմա-

ռիոն հավանաբար մոտ ժամանակներս հրաժեշտ տա մեծ ֆուտբոլին:

Հիշեցնենք, որ ֆուտբոլի արքա Պելեն եւս իր 1000-րդ գոլը խփել էր 11 մ հարվածով: Հետաքրքիր զուգադիպությամբ, Պելեն 1969 թ. «Մարականայում» իր հոբելյանական գնդակը խփել էր հենց «Վասկո դա Գամայի» դարպասը: Ըստ վիճակագիրների, Պելեն խփել է 1281 գոլ: Էլ ավելի տպավորիչ է անցած դարաշրջանի սկզբին համաշխարհային ֆուտբոլի ռմբարկու Արթուր Ֆրիդենրայխի ցուցանիշը, որի օգտին գրանցված է 1329 գոլ:

Այժմ բացի վերը նշված ֆուտբոլիստներից, յուրօրինակ «1000-ի ակումբում» տեղ են գտաղեցրել նաեւ Ռոմարիոն, գերմանացի Գերդ Մյուլլերը եւ ավստրիացի Ֆրանց Բինդերը:

Միայն մեկ մեդալ

Բոնցքամարտի Հայաստանի հավաքականն ավարտեց ելույթները Չեխիայում անցկացված միջազգային մրցաշարում: Ինգ դուրս եկած հայ 7 բոնցքամարտիկներից միայն մեկը՝ 75 կգ քաշային էջմիածնեցի Անդրանիկ Հակոբյանն արժանացավ մեդալի: Նա հաջող անցկացրեց իր մենամարտը եւ հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ զիջելով մրցակցին, դարձավ 2-րդ մրցանակակիր:

Առջեւում իտալացիներն են

«Ջիրո դը Իտալիա» բազմօրյա հեծանվավազքի 10-րդ փուլն ավարտվեց իտալացի Լեոնարդո Պյեռոլիի հաղթանակով: Նա 250 կմ մրցաշարածությունը հաղթահարեց 6 ժամ 19 րոպե 7 վրկ-ում: Նրանից ընդամենը 18 վրկով հետ մնաց իտալացի Դի Լուկան: 3-րդ տեղը գրավեց լյուքսեմբուրգցի Շլեկը: Ընդհանուր հաշվարկով հեծանվավազքը գլխավորեց իտալացի Անդրեաս Նոեն «Լիկագաս» թիմից:

«Շիրակի» անակնկալը

Երեկ երկու հանդիպումներով մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 6-րդ տուրը: Երկրի չեմպիոն «Փյունիկը» հյուրընկալել էր «Շիրակին»: Թվում էր, թե «Փյունիկը», որ նախորդ 6 հանդիպումներից 5-ը հաղթանակներով էր ավարտել, այս անգամ էլ խաղադաշտը կթողնի հաղթանակած: Սակայն շիրակցիները հաճելի անակնկալ մատուցեցին իրենց երկրպագուներին եւ կամային հաղթանակ տոնեցին: Առաջին խաղակեսում փյունիկցի Գետրգ Ղազարյանն առաջ մղեց իր թիմին: Ընդմիջումից հետո շիրակցիները զգալիորեն ակտիվացրին հարձակողական գործողությունները եւ Արարատ Հարությունյանը վերականգնեց հավասարակշռությունը: 67-րդ րոպեին կոպիտ խաղի համար դաշտից հեռացվեց փյունիկցի Ռաֆայել Նազարյանը: Չնայած «Փյունիկը» խաղում էր 10 հոգով, սակայն շարունակում էր ուժգին փնտրել մրցակցի դարպասը գրավելու համար: Իսկ ահա «Շիրակի» ֆուտբոլիստները գրեթե ողջ թիմով պատշտպանվելով, 84-րդ րոպեին հաջող հակագրոհ կազմակերպեցին, եւ Վարդան Բիչախչյանը խփեց հաղթական գնդակը:

Անակնկալ էր հաստատանում նաեւ Ոսկեհատում, որտեղ «Միկան» հյուրընկալել էր «Գանձասարին»: 27-րդ րոպեին «Գանձասարի» հարձակվող Վահե Դավթյանը բացեց հաշիվը: Մինչեւ 83-րդ րոպեն «Միկան» հաշիվը հավասարեցնելու զուր ջանքեր էր գործադրում: Վերջապես Տալեսին հաջողվեց գրավել մրցակցի դարպասը: Բայց 4 րոպե անց «Գանձասարի» հարձակվող Արթուր Քոչարյանը կրկին առաջ մղեց թիմին՝ ծանր կացության մեջ դնելով «Միկային»: Թվում էր, թե «Միկան» խաղադաշտը կթողնի պարտված, բայց մրցավարի ավելացրած ժամանակի 3-րդ րոպեին Արմեն Շահգելդյանը հավասարեցրեց հաշիվը, իսկ մեկ րոպե անց բրազիլացի Ալեքսը խփեց «Միկայի» հաղթական գնդակը:

Այսօր կկայանան առաջին շրջանի վերջին երկու հանդիպումները: «Նաիրի» մարզադաշտում «Արարատը» կհյուրընկալի «Ուլիսին», իսկ «Հրազդանում» կմրցեն «Բանանցն» ու «Կիլիկիան»:

Մովսիսյանը միանձնյա առաջատարն է

Սարաեւոյի շախմատի մրցաշարում վստահ է հանդես գալիս հայազգի գրոսմայստեր Սերգեյ Մովսիսյանը: 4-րդ տուրում նա սեւերով հաղթեց Ալեքսանդր Մորոզեւիչին եւ 3 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը: Նրան կես միավորով է զիջում Բորկա Պրեդոեւիչը, որը սեւերով պարտության մատնեց Արտյոմ Տիմոֆեեւին: Արդյունավետ ելք ունեցավ նաեւ 3-րդ պարտիան: Անգլիացի Նայջել Շորթը սպիտակներով հաղթեց Իվան Սոկոլովին: Վերջինս անդրանիկ պարտությունը կրեց: Այսպիսով, մրցաշարի 6 մասնակիցներից այժմ միայն Մովսիսյանն է անպարտելի:

Սոկոլովն ու Մորոզեւիչը վաստակել են 2-ական միավոր: 1,5 միավոր ունի Շորթը, որն առաջին հաղթանակը տոնեց: Աղյուսակը մեկ միավորով եզրափակում է Տիմոֆեեւը: 5-րդ տուրում կկայանան Մովսիսյան-Շորթ, Սոկոլով-Տիմոֆեեւ, Պրեդոեւիչ-Մորոզեւիչ պարտիաները:

Երկիրխանությունը պահպանվեց

Շախմատի ԱՄՆ-ի առաջնության 8-րդ տուրում Մելիխսեթ Խաչիյանը սպիտակներով ոչ-ոի խաղաց Իլդար Իբրահիմովի հետ: Իսկ Վարուժան Հակոբյանը սեւերով հաղթեց Ռայ Ռոբսոնին: Մեր երկու շախմատիստներն էլ վաստակեցին 4,5-ական միավոր եւ գտնվում են աղյուսակի երկրորդ տասնյակում:

Կրկին անհաջող խաղացին Հուսանիկ Հայրապետյանն ու Մովսես Մովսիսյանը: Նրանք պարտություններ կրեցին համապատասխանաբար Ժուաին Սարկարից եւ Ռոնալդ Բուրնեսից: Մրցաշարային աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են Ալեքսանդր Օնիշչուկն ու Ալեքսանդր Շաբալովը: Նրանք իրենց պարտիաներն ավարտեցին ոչ-ոի: Օնիշչուկը սեւերով ոչ-ոի խաղաց Սերգեյ Կոտրինի հետ, իսկ Շաբալովը միավորը կիսեց Բորիս Գուլկոյի հետ պարտիայում: 5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Գրեգորի Կայդանովը, Սերգեյ Կոտրինն ու Յուրի Շովմանը:

Կլինսմանը հեռուստամեկնաբանի դերում

Գերմանիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Յուրգեն Կլինսմանը մտադիր է իրեն դրսեւորել նոր դերում: Նոր մրցաշրջանից նա, որպես ֆուտբոլային մեկնաբան, կաշխատի գերմանական «Արենա» վճարովի հեռուստաալիքում: Նա ստուդիայում հյուրընկալվելիք անձնավորությունների հետ կքննարկի Բունդեսլիգայի եւ եվրոպական առաջատար առաջնությունների իրադարձությունները: Հիշեցնենք, որ ըստ անգլիական լրատվամիջոցների՝ Կլինսմանին Ռոման Աբրամովիչը հրավիրել էր գլխավորել «Չելսին», սակայն գերմանացի մասնագետը մերժել էր առաջարկը:

Թեյլորը նվաճեց աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը

Միջին քաշում WBC-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Ջերմեյն Թեյլորը Մեմֆիսում մենամարտեց IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոն Կորի Սպինքսի հետ: Վերջինս ուժեղագույնն էր առաջին կիսամիջին քաշում: Հաջողությունն ուղեկցեց Թեյլորին, որը հաղթելով մրցակցին միավորներով (111-107, 115-113, 117-111), նվաճեց միջին քաշում աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը: Նշենք, որ մինչ այդ մենամարտը Թեյլորը պարտություն չուներ: Նա 27 մենամարտերից շահել էր 26-ը (17-ը՝ նոկաուտով), մեկ հանդիպում էլ ավարտել էր ոչ-ոի: Այսպիսով, Թեյլորը շարունակեց հաղթարավը եւ նվաճեց աշխարհի բացարձակ չեմպիոնի տիտղոսը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանը Ռուսաստանի մամուլում ունեցած իր հարցազրույցներում հետևողականորեն այն միտքն է զարգացնում, որ Երևանը պիտի ձգտի լավ հարաբերություններ պահպանել թե՛ Մոսկվայի, թե՛ Վաշինգտոնի հետ, ինչը եւ, նրա կարծիքով, ամենահայամետ քաղաքականությունն է: Ըստ երեւույթին ներկա պատմական փուլում դա այդպես է:

Իր մերձավորարեւելյան քաղաքականության մեջ կրած խայտառակ ձախողումներով ԱՄՆ-ն սկիզբ դրեց միաբեւեռ աշխարհի քայքայմանը: Ռուսաստանը, ճիշտ է, կամաց-կամաց ոտքի է կանգնում, բայց դեռ հեռու է Խորհրդային Միություն դառնալու իրողությունից: Առավել եւս, որ բազմաբեւեռ աշխարհի կազմավորման գործընթացում չեն կարող աննկատ մնալ «ալանսյան ընդհանուր շուկա» ստեղծելու ԱՄՆ-ի եւ Եվրոմիության ծրագրերը, որոնք չեն կարող լինել Ռուսաստանի օգտին: Սակայն այդ շաբլոն ձեւակերպման տակ հասկացվում են առաջին հերթին Չինաստանի սրընթաց զարգացող հզորությանն ու ազդեցության ոլորտների տարածմանը դիմակայելու լուրջ կողմնորոշիչներ:

Գուցե Չինաստանը շատ հեռու է Հայաստանից, կամ, իբր, նա կոմունիստական տերություն է, իսկ մենք «դեմոկրատական» երկիր ենք, գուցե նրա հզորությունը մեզ համար տակավին վերացական է: Ոչ: Արդեն այժմ ժամանակն է, որ Երեւանն առավել քան ուշադիր հետեւի այդ պետության գործողություններին, քանզի, ի հակակիռ ալանսյան դաշինքի, նա է դառնում ակտիվորեն ձեւավորվող՝ պատմականորեն «խաղաղօվկիանոսյան» կոչված համաշխարհային ամփոփ ուժի նոր կենտրոնը: Ամենայն հավանականությամբ արդեն ոչ հեռու ապագայում աշխարհն ականատես կդառնա այս երկու գլոբալ միությունների համադարձակ հակասությունների դրսեւորմանն ու շահերի բախմանը: Ընդսմին, եթե անցած դարում համաշխարհային սոցիալիզմի ու կապիտալիզմի մրցակցությունն ընթանում էր գերազանցապես գաղափարառազմական բնագավառում, ապա այստեղ շեշտը դրվելու է էկոնոմիկայի վրա: Չինացիները երբեք խորհրդային «կոմունիզմ» չեն կառուցի, ինչը հանգեցրեց ԽՍՀՄ-ի փլուզմանը: Չինացիները կառուցում են պետական կապիտալիզմ, ինչին իր պաշտոնակոչման եզրագծին ընդօրինակում է Պուտինը: Արեւելյան դրակոնը հսկայական գումարներ է ներդնում նորագույն տեխնոլոգիաների, գիտության, ֆինանսական ճկուն համակարգերի զարգացման համար: Նաեւ օգտագործելով իր հզոր «սփյուռքը», Չինաստանն արդեն իր ազդեցության գոտու մեջ է ներառել ոչ միայն անմիջական հարեւաններին՝ Մալայզիա, Սինգապուր, Ֆիլիպիններ, Ինդոնեզիա եւ ուրիշներ, այլեւ «սոցիալիստական» կարգախոսներով (իսկ ըստ էության՝ ֆինանսներով) ներխուժել է Լատինական Ամերիկա՝ Կուբա, Վենեսուելա, Բոլիվիա: Չինաստանի շունչն իրենց վրա են զգում նախկին միջինասիական խորհրդային հանրապետությունները:

Սակայն «խաղաղօվկիանոսցիների» հարվածային ուժը շեշտակի կդառնա, երբ մերձենան այդ նոր աշխարհի երկու հզորները՝ Չինաստանն ու Ճապոնիան: Իսկ ամեն ինչ դրան է հանգում: Պեկինն արդեն այսօր դուրս է մղել ԱՄՆ-ին եւ դարձել Ճապոնիայի խոշորագույն առեւտրական գործընկերը: Իսկ ի՞նչ է տեղի ունենում բուն Ճապոնիայում նոր ղեկավարի օրոք: Սինձո Աբեն տոհմական քաղաքագետ է եւ պատկանելով երկրի արիստոկրատական վերնախավին, այլեւ չի նայում Ամերիկային որպես փրկչի՝ հովանավորի: Ավելին, նա խիստ կասկածամիտ է վերջինիս կողմից պարտադրված սահմանադրության «խաղաղասիրական» սկզբունքների նկատմամբ, եւ առաջիկայում պետք է սպասել Ճապոնիայի ոչ միջուկային տերության կարգավիճակի փոփոխմանը: Ցնորանքք, որ այս աշխարհաշրջանում գերիշխում են ոչ թե եվրոպական «լիբերալ» արժեքները, որոնք Արեւմուտքին այլասերում են բարոյապես, այլ՝ հազարամյակների միջով անցած սեփական կենսափիլիսոփայության հիմունքները, որոնք գերապատվություն են տալիս ընտանիքին, աշխատասիրությանը, կարգապահությանը, համբերատարությանը, էթնիկական համերաշխությանը եւ այլն:

Ռուսաստանում լավ են հասկանում, որ, ինչպես ասվեց, ռազմավարական պարտություն կրելով Մերձավոր Արեւելքում (իսլամական աշխարհում), ալանսիստները դրեց միաբեւեռ աշխարհի քայքայմանը: Ռուսաստանը, ճիշտ է, կամաց-կամաց ոտքի է կանգնում, բայց դեռ հեռու է Խորհրդային Միություն դառնալու իրողությունից: Առավել եւս, որ բազմաբեւեռ աշխարհի կազմավորման գործընթացում չեն կարող աննկատ մնալ «ալանսյան ընդհանուր շուկա» ստեղծելու ԱՄՆ-ի եւ Եվրոմիության ծրագրերը, որոնք չեն կարող լինել Ռուսաստանի օգտին: Սակայն այդ շաբլոն ձեւակերպման տակ հասկացվում են առաջին հերթին Չինաստանի սրընթաց զարգացող հզորությանն ու ազդեցության ոլորտների տարածմանը դիմակայելու լուրջ կողմնորոշիչներ:

ՍՏԽՈՐՀԱԲԱՂԱԲԱԿԱՆ

Չսահմանափակվենք միայն Մոսկվայով ու Վաշինգտոնով

Գուցե Չինաստանը շատ հեռու է Հայաստանից, կամ, իբր, նա կոմունիստական տերություն է, իսկ մենք «դեմոկրատական» երկիր ենք, գուցե նրա հզորությունը մեզ համար տակավին վերացական է: Ոչ: Արդեն այժմ ժամանակն է, որ Երեւանն առավել քան ուշադիր հետեւի այդ պետության գործողություններին, քանզի, ի հակակիռ ալանսյան դաշինքի, նա է դառնում ակտիվորեն ձեւավորվող՝ պատմականորեն «խաղաղօվկիանոսյան» կոչված համաշխարհային ամփոփ ուժի նոր կենտրոնը: Ամենայն հավանականությամբ արդեն ոչ հեռու ապագայում աշխարհն ականատես կդառնա այս երկու գլոբալ միությունների համադարձակ հակասությունների դրսեւորմանն ու շահերի բախմանը: Ընդսմին, եթե անցած դարում համաշխարհային սոցիալիզմի ու կապիտալիզմի մրցակցությունն ընթանում էր գերազանցապես գաղափարառազմական բնագավառում, ապա այստեղ շեշտը դրվելու է էկոնոմիկայի վրա: Չինացիները երբեք խորհրդային «կոմունիզմ» չեն կառուցի, ինչը հանգեցրեց ԽՍՀՄ-ի փլուզմանը: Չինացիները կառուցում են պետական կապիտալիզմ, ինչին իր պաշտոնակոչման եզրագծին ընդօրինակում է Պուտինը: Արեւելյան դրակոնը հսկայական գումարներ է ներդնում նորագույն տեխնոլոգիաների, գիտության, ֆինանսական ճկուն համակարգերի զարգացման համար: Նաեւ օգտագործելով իր հզոր «սփյուռքը», Չինաստանն արդեն իր ազդեցության գոտու մեջ է ներառել ոչ միայն անմիջական հարեւաններին՝ Մալայզիա, Սինգապուր, Ֆիլիպիններ, Ինդոնեզիա եւ ուրիշներ, այլեւ «սոցիալիստական» կարգախոսներով (իսկ ըստ էության՝ ֆինանսներով) ներխուժել է Լատինական Ամերիկա՝ Կուբա, Վենեսուելա, Բոլիվիա: Չինաստանի շունչն իրենց վրա են զգում նախկին միջինասիական խորհրդային հանրապետությունները:

Սակայն «խաղաղօվկիանոսցիների» հարվածային ուժը շեշտակի կդառնա, երբ մերձենան այդ նոր աշխարհի երկու հզորները՝ Չինաստանն ու Ճապոնիան: Իսկ ամեն ինչ դրան է հանգում: Պեկինն արդեն այսօր դուրս է մղել ԱՄՆ-ին եւ դարձել Ճապոնիայի խոշորագույն առեւտրական գործընկերը: Իսկ ի՞նչ է տեղի ունենում բուն Ճապոնիայում նոր ղեկավարի օրոք: Սինձո Աբեն տոհմական քաղաքագետ է եւ պատկանելով երկրի արիստոկրատական վերնախավին, այլեւ չի նայում Ամերիկային որպես փրկչի՝ հովանավորի: Ավելին, նա խիստ կասկածամիտ է վերջինիս կողմից պարտադրված սահմանադրության «խաղաղասիրական» սկզբունքների նկատմամբ, եւ առաջիկայում պետք է սպասել Ճապոնիայի ոչ միջուկային տերության կարգավիճակի փոփոխմանը: Ցնորանքք, որ այս աշխարհաշրջանում գերիշխում են ոչ թե եվրոպական «լիբերալ» արժեքները, Չինաստանին զսպելու նպատակով, պիտի փորձեն իրենց ենթարկել «միջանկյալ» տերություններին՝ Հնդկաստանին ու Ռուսաստանին, լատինամերիկյան պետություններին: Էներգատարների՝ Ռուսաստանին շրջանցող նոր ուղիներ կառուցելու, Եվրոմիությունում հակահրթիռային նոր համակարգեր տեղակայելու, ներռուսական ընդդիմությանը ֆինանսավորելու եւ սադրելու ծրագրեր ու համանման մյուս գործողությունները վկայում են, որ Արեւմուտքը գործի է անցել: Պատահական չէր նաեւ Ռուսաստան-Եվրոմիություն վերջին հանդիպման անարդյունավետությունը:

Եվ այս պայմաններում կրկին հրատապ է դառնում Պուտինի երրորդ ժամկետի հարցը: Թերեւս նա միայն կարող էր իր հեղինակությամբ հաշտեցնել ռուս եկեղեցու երկու ճյուղերը, եւ ուղղափառությունը դարձնել ազգի համերաշխման եւ հզորացման ազդեցիկ կռվան: Թերեւս միայն Պուտինը կարող էր լեզու գտնել Ղազախստանի ու Թուրքմենստանի ղեկավարների հետ եւ խափանել ալանսիստների անդրկասպյան պլանը եւ այլն: Գուցե իրոք իրավացի՞ են պուտինամետ ուժերը, որոնք անընդհատ տարփողում են այն միտքը, որ եթե նա հրաժարվի գահից (ինչին տենդագին ձգտում է Արեւմուտքը), ապա դա կդիտվի ոչ թե որպես ազնվություն, այլ՝ սոսկ թուլության նշան:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Իրանի աղակայունացման գաղտնի գործողություններ

Նախագահ Ջորջ Բուշը հավանություն է տվել Իրանի կառավարության աղակայունացմանն ուղղված ԿՀՎ գաղտնի գործողությունների ծրագրին: Այդ մասին հաղորդում է ABC հեռուսաընկերությունը, վկայակոչելով ամերիկյան հատուկ ծառայությունների աղբյուրներ:

ԿՀՎ ծրագիրը թեեւ գաղտնի է պահվում, բայց ըստ երեւույթին ներառում է բնակչության ապատեղեկատվացման արշավ, ինչպես նաեւ իրական արժույթի եւ միջազգային ֆինանսական գործառնությունների հետ կապված մեքենայություններ:

Գաղտնի գործողությունների նպատակն է ճնշում գործադրել Թեհրանի վրա, որպեսզի նա վերջ դնի սեփական միջուկային ծրագրին եւ իրաքցի գրոհայիններին հատկացվող օգնությանը:

Պ. Բ.

Ղվարցենեգերն ադրբեջանցիներից հասարակական քաղաքական ակտիվություն է ակնկալում

«Շատ եմ ուզում, որ նահանգի բնակիչ ադրբեջանցիները մասնակցեն հասարակական-քաղաքական կյանքին, որպեսզի դառնան Կալիֆորնիայի մասնիկը: Դա չափազանց կարեւոր է: Ես էլ նույնն եմ արել: Դում պետք է հիշեք ձեր պատմական հայրենիքը, միաժամանակ հավատարիմ մնալով ԱՄՆ-ին, Կալիֆորնիային: Միայն այդպես կարող եք հաջողության հասնել», այս հորդորը բարձրաձայնել է Կալիֆորնիայի նահանգապետ Առնոլդ Ղվարցենեգերը Առեւտրային պալատի ավանդական նիստից հետո Սակրամենտոյում: Ասուլիսը, սակայն, ինչպես տեղեկացնում է «Դեյ.ազը», մայիսի 28-ը՝ Հանրապետության օրն է եղել:

Ն. Պ.

Ալլաուդյոր Փաշազադե. Դավիթ Գարեջիի վանքի տարածքը Ադրբեջանին է պատկանում

ԲԱՔՈՒ, 23 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կովկասի մահմեդականների վարչության ղեկավար Ալլաուդյոր Փաշազադեն հայտարարել է, որ Դավիթ Գարեջիի վանքի տարածքը Ադրբեջանին է պատկանում: «Այդ հարցով Վրաստանի հետ բանակցություններ են ընթանում պետության կողմից, իսկ ես կարող եմ միայն կրոնական գնահատական տալ: Վանքի տարածքը պատկանում է Ադրբեջանին, դա Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարց է, եւ մենք հենց դա ենք ցանկանում», լրագրողներին ասել է Փաշազադեն:

Ընդսմին Կովկասի մահմեդականների վարչության ղեկավարը նշել է, որ Ադրբեջանում Վրաստանի վանքի բնականոն գործունեության համար ոչ մի խոչընդոտ չկա:

ՄԱՆՈՒՖՈՒՄ

Eurasia Foundation (EF), an international non-profit organization supporting the development of civil society and private enterprise in the countries of the former Soviet Union, is accepting applications for the following position: **Country Director for Armenia.**

Based in Yerevan and under the supervision of the Regional Vice President, the Country Director will manage the Foundations grant making and program operations in the Armenia. Significant professional experience (minimum 7 years) in civil society development, public sector reform, and grant-making is strongly preferred. Previous management-level professional experience in Central Europe, the Caucasus, or Central Asia, as well as fluency in written and spoken Armenian and English is required. Good Russian Language skills are highly desirable. Extensive experience in personnel management, strategic planning, fundraising and project management activities is also required. Master's degree or equivalent, preferably in the area of public policy/administration, economics, or business management is required. Salary will be commensurate with experience.

For more information on the activities of Eurasia Foundation Representative Office in Armenia and a complete job description, please visit the EF Armenia website at **www.eurasia.am.**

Please send a cover letter and resume to: resume@eurasia.am. No phone calls please

The deadline for accepting applications for this position is **Friday, June 8, 2007**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՊՁԲ-07/18 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ոստիկանության կարիքների համար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 725 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ», «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Կ. Դրամբյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ն:

«ՍՓՅՈՒՌԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ

Տեղեկագրքի անվանումը	Շեղաթերթերի համար	Բնակչության համար
«Հայաստանի գործարար տեղեկատու եւ Դեղին էջեր»	անվճար	3 000 դրամ
«Հայաստանի Դեղին էջեր» կազմակերպությունների տեղեկատու		400 դրամ
Փ. Բուզանդի 1/3, 7-րդ հարկ, հեռ.՝ 563505	Նամակով դիմեք «Սփյուռի» գրասենյակ	Հարցրեք կրպակներում

Վաճառվում է
Հողատարածքներ
Պռոշյան սովխոզում՝ 200 հազ. քառ. մ, 24 հազ. քառ. մ, 6,5 հազ. քառ մ.:
Հեռ. *093 74 03 00*

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ Է
մեկ սենյականոց բնակարան Տիգրան Մեծի պողոտայում:
Զանգահարել՝ *576267* հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կատարում եմ գրքերի, բրոշյուրների, ամսագրերի, հրավիրատոմսերի համակարգչային ձեւավորում, նախապատրաստում տպագրության:
e-mail: gev-arm@yahoo.com
Հեռ.՝ 091-21-38-19, 63-18-81 Արմեն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Առաջարկում ենք համակարգչային ծառայություններ. օրերացիոն համակարգի տեղադրում, վիրուսների մաքրում, դիագնոստիկա, լոկալ ցանցերի տեղադրում:
Համակարգչային ուսուցում. Windows OS, տարբեր ծրագրեր: Խորհրդատվությունը ըստ ցանկության:
Հեռ. 010 27 11 06, 091 71 89 03 Տիրան
e-mail: outsider1024@rambler.ru

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 26.04.2007 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	350.50
EUR	1	ԵՎՐՈ	471.56
RUR	1	Ռուս. ռուբլի	13.54
GEL	1	Վրաց. լարի	212.75

ԳՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԳԱՄՇՈՒՐԵԼ՝ 58-29-60

Լուսուական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 23.05.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: